Azg Վազ

27 ՆՈՅԵՄԲԵՐ 2008 ՀԻՆԳՇԱԲԹԻ 220 (4114)

Հայաստանում կստեղծվի ազատ առեւտրի գոտի

Ըստ «Արմենպրեսի», վարչապետի հանձնարարականով՝ միջազգային տնտեսական ճգնաժամի ազդեցությունը մեղմելու նպատակով հանրապետությունում կստեղծվի խորհուրդ, որը լուծումներ կառաջարկի արտադրական ձեռնարկություններում առաջացած խնդիրների վերաբերյալ: Էկոնոմիկայի նախարարության ոլորտային եւ տարածաշրջանային տնտեսական զարգացման վարչության պետ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ համաշխարհային տնտեսական ճգնաժամի հնարավոր ազդեցության դիմակայման միջոցառումների շրջանակներում Հայաստանում նախատեսվում է ստեղծել նաեւ ազատ առեւտրի գոտի: Արդեն մշակված է համապատասխան հայեցակարգ, որն օրերս կքննարկվի կառավարությունում: Առաջնահերթ ազատ առեւտրի գոտի կստեղծվի «Զվարթնոց» օդանավակայանում, այնուհետեւ տնտեսական ոլորտվածությամբ նմանատիպ գոտու ստեղծման ուղղությամբ աշխատանքներ կտարվեն Գյումրիում: Հ. Միրզոյանի տեղեկացմամբ՝ արդեն ձեռք է բերվել պայմանավորվածություն «Զվարթնոց» օդանավակայանի կոնցեսիոների հետ, որը համաձայնել է կազմակերպել աշխատանքը:

ՖՈՏՈ ԼՈՒՐԵՐ

Հայաստանը մեծարեց իր չախմախիստներին

Տես էջ 7

ԹՈՒՐՔԻԱ

«Բացասական սցենարները հանդիպումներում նույնիսկ օրակարգ չեն բերում»

ՀՀ արտգործնախարարի այցը Բաբաջանի գնահատմամբ

Նոյեմբերի 25-ին Տաջիկստան է մեկնել Թուրքիայի արտգործնախարար Ալի Բաբաջանը: Ուղեւորվելուց առաջ Անկարայի «Էսենբողա» օդանավակայանում նա ճեպազրույց է ունեցել լրագրողների հետ: Թուրքական հանրային հեռուստատեսության վկայությամբ, Բաբաջանն ի պատասխան «եթե արդյունքի չհանգեն Ադրբեջանի բանակցությունները Հայաստանի հետ, դա ինչպե՞ս կանդրադառնա Թուրքիա-Հայաստան երկխոսության գործընթացի վրա» հարցի, ասել է. «Այս հանդիպումներում նույնիսկ օրակարգ չենք բերում բացասական սցենարները: Մեր ջանքերը միշտ դրական հեռանկարայնությամբ ենք գործադրում»:

Բաբաջանն ընդգծել է, որ Հայաստանի հետ Թուրքիայի մերձեցումը դրական է անդրադառնալու նաեւ Ադրբեջան-Հայաստան հարաբերությունների վրա, ապա եւ շարունակել. «Դրանք միմյանցից անջատ հարցեր չեն: Դրական հեռանկարայնությամբ ցանկանում ենք, որ այս մերձեցումն ու հարաբերությունները միմիայն առաջ ընթանան, մնացած բոլոր խնդիրներն էլ, հանկարծ հետընթաց չկատարվի: Պարզ ասած, ելնելով մինչեւ օրս ստացած ազդանշաններից, կարող եմ նշել, որ մեր կատարած աշխատանքները բավական դրական են»:

Օգտվելով առիթից նշենք, որ Անկարայում բանակցություններ վարող Եվրոխորհրդարանի պատվիրակությունը բարձր է գնահատել «Կովկասի կայունության եւ համագործակցության պլատֆորմ» ստեղծելու վարչապետ Էրդողանի նախաձեռնությունը եւ ողջունել է Հայաստան-Թուրքիա երկխոսության սկզբնավորումը:

Հ. ՉԱՔԲՅԱՆ

«Անկարայում ընդունելության առանձնահատուկ արարողակարգ ՀՀ արտգործնախարարին»

Երեկ այդ մասին տեղեկացրել է «Զամանը»: Ահա թե ինչ է գրել թուրքական թերթը. «Նախորդ օրը Սամբուկ էր այցելել Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը: Նրա դիմավորումն ու ուղեւորումը հատուկ արարողակարգով կազմակերպելու միջոցով Թուրքիան յուրահատուկ ժեստ արեց: Թուրքիայի արտգործնախարարությունը Սամբուկի «Աքաթուրֆ» օդանավակայանում Էդվարդ Նալբանդյանին դիմավորեց «Պետական հյուրասրահում», այլ ոչ թե օտարերկրյա հյուրերի համար նախատեսված VIP սրահում: Չնայած նա Թուրքիա էր ժամանել աշխատանքային այցով, սակայն հյուրընկալվեց բացառապես պետության նախագահների, վարչապետների, թագավորների եւ թագուհիների համար նախատեսված «Պետական հյուրասրահում»: Թեեւ այս հյուրասրահից օգտվում են նաեւ պետական մյուս գործիչները, սակայն դա կատարվում է շատ հազվադեպ եւ հատուկ թույլտվությամբ: Հյուրասրահի մուտքի մոտ բարձրացվեցին Թուրքիայի եւ Հայաստանի դրոշները: Նալբանդյանը նույն արարողակարգով էլ ուղեւորվեց: Մինչդեռ երկու երկրների միջեւ նույնիսկ չկան պաշտոնական բանակցություններ: Նկատի ունենալով այս հանգամանքը, «Բահչեշեհիր» համալսարանի միջազգային հարաբերությունների բաժնի պրոֆ. Հասան Ջոնին ասաց, որ «այս հատուկ արարողակարգը Հայաստանին արված յուրաքանչյուր ժեստ է»:

Հ. Ջ.

ԼՂՀ մուտքի վիզան լուրջ խնդիրներ է առաջացնում Ադրբեջան մեկնողների համար

Ըստ «Նոյյան տապանի», ԼՂ մուտքի արտոնագիր ունենալը հզոր տաբու է դարձել Ադրբեջան այցելողների համար, գրել է կանադական Esprit de Corps ռազմական հանդեսի խմբագիր եւ մի շարք գրքերի հեղինակ Սթոք Թեյլորը, կանադական The Chronicle Herald-ում տպագրված իր հոդվածում: Հարավային Օսիայում լրագրողական հետաքննությունն ավարտելուց հետո, Թեյլորը Մինվոդիից (Ռուսաստան) ուղեւորվել է Բաքու՝ արտաքին գործերի նախարարության համալսարանում ելույթ ունենալու համար: «Բաքու ժամանելով, անձնագիրս ներկայացրի օդանավակայանի աշխատակցին, վստահ, որ ունեմ երկիր մտնելու օրինական արտոնագիր եւ պաշտոնական հրավեր, գրում է Սթոքը, սակայն դրանք հօդս ցնդեցին, երբ օդանավակայանի աշխատակցուհին սեփական աչքերին չհավատալով պարզեց, որ ես եղել եմ Լեռնային Ղարաբաղում»: Անմիջապես այնտեղ հայտնված ոստիկանության աշխատակիցները Սթոքին շտապ ուղեկցեցին առանձին սենյակ հարցաքննության համար: Շնորհիվ Օստավայի դեսպանատան մի քանի հրատապ զանգերի եւ Ադրբեջանի փոխարտգործնախարարի անմիջական միջամտության Սթոքին մի քանի ժամից ազատ արձակեցին: «Այս իրավիճակի բնականոն ընթացքը կլիներ ԿԳԲ-ի միջամտությունն ու երկրից պաշտոնական արտաքսումը,- գրում է կանադացի լրագրողը:- Իմ բախտը բերեց»:

Մարդու իրավունքների պաշտպանն ստացել է 3 217 դիմում-բողոք

Մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանն այս տարվա տասն ամիսներին ստացել է 3 217 դիմում-բողոք, որոնցից 1023-ը՝ գրավոր: Ինչպես «Արմենպրեսին» տեղեկացրին պաշտպանի աշխատակազմից, դիմումների ուսումնասիրության եւ հետազոտության արդյունքում քննարկման է ընդունվել 448, փոխանցված է այլ մարմինների՝ 31, քննարկման չի ընդունվել 324, չի քննարկվել դիմումատուի խնդրանքով՝ 20, ուսումնասիրության ընթացքում է՝ 92 դիմում-բողոք: Վերլուծությունը փաստում է, որ քաղաքացիներ[illegible]ռավել մեծ թվով դիմումներ են ստացվում ՀՀ ոստիկանության (216), դատարանների (125), Երեւանի քաղաքապետարանի (78). աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության (66) դեմ: Մարդիկ ավելի հիշ են դժգոհում ՀՀ կառավարության, Ազգային անվտանգության ծառայության, կրթության եւ գիտության, առողջապահության նախարարությունների գործունեությունից: Վերոնշյալ ժամանակահատվածում 118 դեպքում խախտվել է մարդկանց բավարար կենսամակարդակի, բնակարանի եւ կենսապայմանների բարելավման, 88 դեպքում՝ սեփականության, 77 դեպքում՝ ազատության եւ անձեռնմխելիության, 54 դեպքում՝ սոցիալական ապահովության, 38 դեպքում՝ աշխատանքի ընտրության ազատության իրավունքը եւ այլն:

Խոստանում է «աչքը հանել»

Երեկ «Նախազգուշացում» վերնագրով, Ալբերտ Սոմիասյանի անունից հաղորդագրություն է տարածվել, որում վերջինս հայտարարում է. «Արդեն լուրեր են պտտվում, թե ով է աչք դրել «Բջնի» գործարանի վրա: Նախազգուշացնում եմ բոլոր անօրինականություն գործողներին, կպատժվեք օրենքի ամբողջ խստությամբ: Թող չթվա ձեզ, թե հետո արդարանալու եք, որ հրաման եք կատարել կամ չեք իմացել, թե ինչ անօրենություն եք անում կամ ուրիշ ճար չեք ունեցել: Ձեր անձնական գույքով օրենքի առջեւ պատասխան եք տալու մեր կրած վնասների համար: Իսկ այն անձինք, ով «աչք» է դրել մեր գույքի վրա եւ ուզում է այն խլել, ապա թող իմանա, որ այդ «աչքը» կհանեմ, անկախ նրանից՝ անձամբ հանդես կգա, թե միջնորդավորված խա[illegible]ճիկների միջոցով: Այս պահից բոլոր անօրեններդ համարվում եք նախազգ[illegible]ացված»:

Մեր դատավորներն այսուհետեւ կաշառք չեն վերցնելու

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայաստանի ընդհանուր իրավասության 216 դատավորները 2009 թվականին կստանան կրկնակի բարձր աշխատավարձ՝ 440 հազար դրամ դրույքաչափով, որն, ի դեպ, այստեղտեղ պետք է սահմանվի բյուջեի օրենքով, յուրաքանչյուր տարի: Կարելի է ենթադրել, որ մեր դատավորներն այսուհետեւ այլեւս չեն կաշառվելու, չեն կոռումպացվելու եւ միայն արդար վճիռներ են կայացնելու: Համենայն դեպս՝ այդ բացատրությամբ էր հիմնավորվում երեկ նոր օրենսդրական փաթեթը, որ կառավարությունը բերել էր Ազգային ժողով, եւ որով 2009-ի բյուջեով առանձին հոդվածներով պետք է սահմանվեն դատավորների եւ գլխավոր դատախազի աշխատավարձերի պատոնական դրույքաչափերը: Հիմնական զեկուցող, աշխատանքի եւ սոցապահովության նախարար Արսեն Համբարձումյանը ներկայացրեց «ՀՀ օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների



պաշտոնային դրույքաչափերի մասին ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» եւ «Դատախազության մասին» օրենքում փոփոխությունների նախագծերի այդ փաթեթը, որով հիմնավորում որպես նշվում է, թե դաշտը կարգավորող օրենսդրությունը գործում է 2003-ի հուլիսի 1-ից, մինչդեռ մինչ այժմ ընդհանուր իրավասության դատարանի դատավորի պաշտոնային դրույքաչափը փոփոխության չի ենթարկվել:

Տես էջ 2

Սամվել Կարաղեսյան. «Պետք է պատիժ պահանջել եւ ոչ խնդրագրեր հղել»

Ճարտարապետ Արմեն Հախնազարյանի եւ պատմաբան Սամվել Կարաղեսյանի շուրջ 40 տարվա գործունեությունը, որ ի վերջո կենտրոնացել է «Հայկական ճարտարապետություն ուսումնասիրող» հասարակական կազմակերպությունում, ի թիվս բազում ուսումնասիրությունների տվել է կարեւոր արդյունք՝ հազարավոր փաստագրական լուսանկարներ, ուսումնասիրություններ, 11 հրատարակություն (5-ը՝ Վրաստանի տարածքում գտնվող հայկական հուշարձանների մասին) եւ այլն: «Հարկ կար զբաղվելու եւ խորհրդային, եւ մերօրյա Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող հայկական պատմամշակութային հուշարձանների ուսումնասիրմամբ, պարզապես հաշվառմամբ: 1989 թվականից մինչեւ 1993-ը Խորհրդային Ադրբեջանի տարածքում էինք կատարում այդ ուսումնասիրությունները, այդտեղ Խորհրդային Վրաստանում, որտեղ դրանց վտանգվածությունը պակաս չէր, քան Ադրբեջանում», երեկ «Նովոստի» մամուլի միջազգային կենտրոնում կայացած հանդիպմանը փաստեց Սամվել Կարաղեսյանը:

1995 թվականին նրա իսկ կատարած հաշվառմամբ՝ Վրաստանի տարածքում 650 հայկական հուշարձան կա: Թիվն այս, պատմաբանի կարծիքով, պակասեցնելու համար փաստաթղթեր չկան, իսկ հակառակն ամենեւին բացառված չէ: Սակայն Կարաղեսյանը գտնում է, որ նշյալ հուշարձաններից եւ ոչ մեկի անվանգությունը երաշխավորված չէ. «Ոչ միայն քրիստոնյային, այլեւ մարդուն վայել չէ իր իսկ հոտի հանգուցյալներին շիրմաքարկելը, իսկ Թբիլիսիի Սուրբ Նորաշենի վրացականացումը «տնօրինող» Տարիել քահանան հենց դրանով էր զբաղված ընդամենը մի քանի օր առաջ. նախկինում իր իսկ հոտի՝ Ալեթի գյուղի գերեզմանատնից 19-րդ դարի շիրմաքարերը Ս. Նորաշենն տեղափոխելով»: Նորաշենի եւ Վրաստանի տարածքում հայկական այլ եկեղեցիների վերականգնման կամ նորոգման անվան տակ բարբարոսաբար վրացականացման եւ ուղղակի պայթեցումներով վերացնելու բազմաթիվ փաստերը լուսանկարներով մանրակրկիտ ներկայացրեց Սամվել Կարաղեսյանն ու իրավամբ փաստեց. «Հանցագործություն է կատարվել եւ խնդրագին պարզաբանումների փոխարեն հարկ է դիմել համաթատասխան դատարան, հատկապես որ քաղաքակիրթ աշխարհն օրենսդրական բոլոր հիքերը վաղուց ստեղծել, սահմանել է: Մնում է հետեւողականորեն աշխատել ու տեր կանգնել, տեր զգալ մեր մշակութային արժեքներին: Հավատացեք, այդ դեպքում քաղաքակիրթ աշխարհն անտարբեր չի մնա դրսեւորվող վանդալիզմին»:



Վերոնշյալ մոտեցումն, ըստ բանախոսի, մեծապես կարող է նպաստել ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանը. «Ի վերջո, եթե կարողանանք ապացուցել Խորհրդային Ադրբեջանին բռնակցված՝ ազատագրված տարածքներում հայկական մշակութային արժեքների բարբարոսաբար ոչնչացման փաստերը, ապա քաղաքակիրթ աշխարհը կհասկանա, որ նման երկրին ուղղակի չի կարելի անգամ մեկ միլիմետր ավելի հող թողնել»: Սակայն, թե ո՞ւմ գործառույթն է դատարան դիմելը, Սամվել Կարաղեսյանը, բնականաբար, չհստակեցրեց, միայն ընդգծեց, որ հարցին առավել ուշադիր լինելու խնդիր ունեն թե՛ արտաքին գործերի եւ թե՛ մշակույթի նախարարությունները: Ինքը՝ պատմաբանը փաստագրական նյութերի ամբողջական փաթեթներ է մշակել, որոնք պատրաստ է տրամադրել եւ դեկտեմբերի սկզբին էլ ներկայացնելու է Հայաստանում կայանալիք համաթատասխան գիտաժողովում:

ՆԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հին Զուղայի հայկական գերեզմանատան ոչնչացման առնչությամբ հայցը Մարդու իրավունքների եվրոպական դատարանում է

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արդեն երկու ամիս ֆնության է առել Հին Զուղայի հայկական գերեզմանատան ոչնչացման հարցը: Համաթատասխան հայցով նշյալ դատարան է դիմել Ֆրանսիայում գրանցված «Արեւմտյան Հայաստանի հայերի ազգային խորհուրդ» հասարակական կազմակերպությունը, որը ներառում է բազում կազմակերպություններ: Այս մասին էլ տեղեկացրեց պատմաբան Սամվել Կարաղեսյանն ու նշեց, որ այս գործի փաստագրական ողջ նյութը պատրաստել ու տրամադրել է «Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող» հասարակական կազմակերպությունը: Ադրբեջանի իշխանությունների թողտվությամբ դեռեւս 1990-ականներին սկսված Հին Զուղայի հայկական գերեզմանատան ոչնչացումն ու նույն տարածքը ռազմակայանի վերածելու փաստը, որ ժամանակին համաշխարհային հանրության արձագանքի ճնշմամբ 1998-ին դադարեցվեց ու վերսկսվեց 2003-ին ու ավարտին հասցվեց 2005-ին, չթեթեւացրեց մեղքը: Կրկնությունը պատիժով պետք է կանխվի՝ համոզված է Սամվել Կարաղեսյանն ու, վստահաբար, ոչ միայն նա:

Մեր դատավորներն այսուհետեւ կաշառք չեն վերցնելու

1-ին էջից

Մի խոսքով՝ մեր դատավորների աշխատավարձի դրույքաչափը պետք է ամեն տարի սահմանվի բյուջեի օրենքում առանձին տողով: Սա տեղավորվում է կառավարության հակակոռուպցիոն քաղաքականության շրջանակներում, եւ ըստ Ա. Համբարձումյանի՝ «Դատավորի առաքելությանը համապատասխան վարձատրություն ապահովելու ճանապարհով մենք կարող ենք հերթական կարեւոր քայլը կատարել անկախ եւ անաչառ դատական համակարգ ունենալու համար», սա՝ որպես հիմնավորում: Գլխավոր դատախազի պաշտոնական դրույքաչափը եւս սահմանվում է յուրաքանչյուր տարվա բյուջետային օրենքով, սակայն նրա աշխատավարձի բարձրացում չի նախատեսվում: Եթե տարանջատում չլինի՝ դատախազության օրենքի, դատական օրենսգրքի, օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների պաշտոնային դրույքաչափերի օրենքներով, ապա ընդհանուր իրավասության դատարանների դատավորների աշխատավարձին անդրադառնալիս նաեւ անդրադարձ կլինի դատախազների աշխատավարձին, իսկ վերջիններիս աշխատավարձը 2008-ի հունվարից արդեն իսկ բարձրացել է, մինչդեռ մեր խեղճ դատավորները 2003-ից մինչ օրս նույն խեղճուկրակ (220 հազ. դրամ) աշխատավարձով են արդարադատություն իրականացնում: Այդ պատճառով դատավորների աշխատավարձը բյուջեով կարգավորելու այս փոփոխություններն են առաջարկվում: Իհարկե, լավ կլիներ, որ գործադիրի եւ օրենսդիրի աշխատավարձերը եւս զուգահեռ բարձրանային, մտածում էին երեկ ԱԺ դահլիճում հնչեցրած ելույթներում պատգամավորները, բայց գործադիրը ներկայացնող պաշտոնյան հիշեցնում էր, որ եղած հնարավորությունները թույլ չեն տալիս այս բարձրացումները տարածել բոլորի վրա: «2009-ին ԱԺ պատգամավորների համար լուծվելու է օգնականների աշխատավարձերի խնդիրը, իսկ գործադիրը համեստաբար իր համար ոչինչ չի պահանջում», ասաց Ա. Համբարձումյանը:

Սակայն չի կարելի ասել, որ պատգամավորները համաձայն էին նրա հետ: Օրինակ, ՀՀԿ խմբակցությունից Ռաֆիկ Պետրոսյանը, որը համալսարանի իրավաբանական ֆակուլտետի դեկան է եղել երկար տարիներ, ու ներկա դատավորների մեծ մասը նրա ձեռքի տակից է անցել, վստահ է, որ բյուջեի վրա 1 մլրդ դրամ հավելյալ ծախս բերող այս բարձրացումը չի կարող արմատախիլ անել կոռուպցիան դատական համակարգից, դա գումարի վատնում է, քանի որ դատարաններին վերահսկելու մեխանիզմ չկա, որ կոռուպցիոն ռիսկերը նվազեն: Ստեփան Սաֆարյանն ուշադրություն հրավիրեց, որ բյուջեի այդ մեկ տողի հետ կապված՝ համակարգի արդյունավետություն ֆնարկել չի լինի, իսկ ելույթում էլ այս բարձրացումը համարեց հետմարտիմեկյան դատական խայտառակ պրոցեսների իրականացման համար երախտագիտություն, Արծվիկ Մինասյանը մտահոգությունը ձեւակերպեց հարցով. «Դատարաններն ավելի քաղաքական մարմին չե՞նք դարձնում՝ կախված կառավարությունից եւ ԱԺ-ից, անկախությունը չե՞ն կորցնում»: Նաիրա Զոհրաբյանը հաշվարկ էր ուզում, թե դրանից որքա՞ն կնվազի կոռուպցիան: Լիլիթ Գալստյանը սոցիալական լարվածության խնդիրը մատնանշեց, Հովհաննես Մարգարյանը հետաքրքրվեց՝ արդյոք կա՞ մի ուրիշ երկիր, որտեղ որոշ համակարգերում երկրի նախագահից ավելի բարձր աշխատավարձեր են ստանում: «Քանի՞ դատավոր է պատժվել կաշառք վերցնելու համար», հարցրեց հասարակ պատգամավոր Տիգրան Թորոսյանը՝ նույնպես թերահավատ, որ աշխատավարձի բարձրացմամբ կաշառքը կվերանա: Նույնիսկ երիտասարդ հանրապետական Արտակ Դավթյանը կառավարությանը խորհուրդ տվեց՝ չուրանալ ծնողին (իմա՝ բարձրացնել ԱԺ պատգամավորների աշխատավարձը):

Մտածելու տեղիք էր տալիս էլի ՀՀԿ-ական Համլետ Հարությունյանի ասածը. թե՝ ովքեր համաձայն են այդ հիմնավորմամբ աշխատավարձի բարձրացմանը, համաձայն են իրենց սոցիալական գնահատականին, ամոթ է: Այսինքն՝ ԱԺ բարձր ամբիոնից պաշտոնական անձի շուրթերից հնչած խոսքից կարելի է եզրակացնել, որ մինչեւ հիմա դատավորները կաշառք են վերցրել, քանի որ ցածր աշխատավարձ են ստացել...ուրեմն բոլոր քիչ ստացողները, ստացվում է, կարո՞ղ են կաշառք վերցնել:

Պատգամավորներից շատերն առաջարկեցին հետ վերցնել օրենքը:

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

ՌԱԿ-ի Արեւելյան Ամերիկայի եւ Կանադայի շրջանային վարչության հաղորդագրությունը

Հոկտեմբերի 13-ին Հայաստանի Հանրապետության Վաշինգտոնի դեսպանատանը ՀՀ արտաքին գործերի առաջին փոխնախարար Արման Կիրակոսյանն ու առեւտրի եւ տնտեսության նախարար Ներսես Երիցյանն ընդունել են ՌԱԿ-ի Նյու Յորք-Նյու Ջերսիի ակումբի ատենապետ՝ Գրիգոր Սալպաչյանին, տեղեկացնում է Կանադայում հրատարակվող ԹՄՄ-ի «Արագայ» շաբաթաթերթի նոյեմբերի 3-ի համարը:

Սալպաչյանն անձնական նախաձեռնությամբ Հայաստանի կառավարությանն է ներկայացրել Թուրքիա-Հայաստան սահմանի բացման պարագայում իրագործվելիք առեւտրական իր մտահղացման ծրագիրը, որը կարող է, իր հավաստիացումներով, նոր աշխատատեղեր ստեղծել 2500 հայաստանցիների համար:

Նույն օրը, երեկոյան նա ներկա է գտնվել վարչապետ Տիգրան Սարգսյանի եւ գաղութի ներկայացուցիչների հանդիպմանը: Դրանից առաջ՝ սեպտեմբերի 25-ին նա ներկա է գտնվել նաեւ Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլի պատվին տրված հյուրասիրությանը Նյու Յորքում:

Այս առիթներով «Արագայում» տպագրված ՌԱԿ Արեւելյան Ամերիկայի եւ Կանադայի շրջանային վարչության հաղորդագրության մեջ մասնավորապես ասվում է.

«Մինչ ՌԱ կուսակցականներն իրենց անձնական թե կուսակցական միջոցներով կը հետեւին Հայաստանի նախագահ՝ Սերժ Սարգսեանի արտաքին քաղաքականութեան դիւանագիտական յաջողութիւններուն եւ կը ջանան օժանդակել Հայաստանի տնտեսական զարգացման, ինչ որ դաւանանքը եղած է ՌԱ կուսակցութեան 1921 թուականէն ի վեր, միշտ հայրենիքի կողքին կանգնելով՝ անտեսելով նոյնիսկ համայնավարութեան գաղափարականն ու անոր յարուցած դժուարութիւնները, Հայաստանի երրորդ անկախութեան առթած ոգեւորութիւնները եւ միջկուսակցական անհասկացողութիւնները, անդին ոմանք համացանցով լծուած են «սեւացրէք»ի արշաւի մը ընկ. Գրիգոր Սալպաչեանին դեմ, զինք կոչելով դաւաճան եւ Թուրքիոյ գործակալ եւ ապա՝ տիաճ ու լորձնաշուրթ ածականներ կը գործածեն:

Բարեբախտաբար, բոլոր անոնք, որոնք դժբախտութիւնն ունեցած են ճանչնալու զանոնք, շատ լաւ գիտեն, որ վերի ածականներն աւելի իրենց կը յարմարին, քան որեւէ այլ ռամկավար ազատական շարքայինի:

Ժամը եկած է, որ աշխարհի բոլոր կողմերու մէջ ռամկավար ազատականներ, որոնք վստահ ենք, բոլորն ալ լծուած են Հայաստանի զարգացման ու զօրացման աշխատանքին, սթափին եւ պարտն ու պատշաճը կատարեն ուժեղացնելու համար կուսակցությունը, զգաստութեան հրաւիրելու այդ խորոտ ձայները»:

Փախստականների եւ աղաստանի մասին օրենք

Վերջապես Հայաստանն էլ քաղաքակիրթ երկրների նման «Փախստականների եւ աղաստանի մասին» օրենք կունենա, որը երեկ ԱԺ-ում քննարկվեց երրորդ ընթերցմամբ: Մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի հանձնաժողովի նախագահ Մխիթար Մնացականյանի խոսքով՝ այդքիսով առանձին-առանձին օրենքներով կարգավորվող ոլորտը վերջապես համապատասխանեցվեց մարդու իրավունքների միջազգային կոնվենցիային, եւ Հայաստանում եւս փախստականը օրենքով մարդ է, որը պետք է անկախ իր կարգավիճակից, լիարժեք հնարավորություններ եւ իրավունքներ ունենա աշխատելու եւ այլն:

Օրենքը ՄԱԿ-ի փախստականների հարցերի գրասենյակի, ԱԺ հանձնաժողովի եւ Հայաստանի կառավարության ջանքերի արդյունք է, որը նախապես քննարկվել է քաղաքացիական հասարակության միավորների հետ, լսումներ են եղել, տեւական աշխատանք է կատարվել, այդքիսով կարգավորվել է դաշտը: Օրենքի լայն հայացքի մասին Մ. Մնացականյանը մի օրինակ բերեց. մինչեւ հիմա ամեն սահման հատողի որպես լրտեսի էինք նայում, այժմ հենց օրենքը թույլ է տալիս նրան դիտել այլ տեսանկյուններից՝ գուցե փախստական է կամ աղաստան հայցող, ասել է թե՝ այլեւս ռեժիմային ձեւով չենք մոտենա խնդրին, այլ՝ մարդու իրավունքները հարգելով:

Մ. Խ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ժէ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն / հեռ 529353
Համակարգչային շարուածը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

«Թուրքիան ցանկանում է բացել սահմանները, նրան միայն պատրվակ է հարկավոր»

Քանավիճում են հայ եւ թուրք վերլուծաբանները

ՊՈՍՏԼՈՒԹ

Թուրքական հասարակության շուրջ 65 տոկոսը կողմ էր Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլի այցին Հայաստան: Թուրքական մամուլը վերջին մի քանի ամիսներին ավելի շատ հայանպաստ հոդվածներ է տպագրել, քան նախորդ տասը տարիներին: Տվյալները ներկայացնում է «Եվրոպական կայունություն» հետազոտական ինստիտուտի ներկայացուցիչ, թրքոտի **Նիգյար Գյոքսելը**: Հայ-թուրքական հարաբերությունների ուսումնասիրությամբ զբաղվող Նիգյար Գյոքսելը վստահ է, որ երկար սպասված երկխոսությունը երկու պետությունների միջեւ սկսված է: «Երկխոսությունը հարաբերությունների լավացման միակ ճանապարհն է: Թուրքիան այսօր փոփոխվող երկիր է եւ հասարակության մեծ մասը բարեփոխումներ է պահանջում», «Հայելի» ակումբում լրագրողների հետ հանդիպման ընթացքում նշեց նա:

Քաղաքագետ **Ռիչարդ Կիրակոսյանի** համար ակնհայտ է առաջընթացը երկու երկրների հարաբերությունների կայունացման ուղղությամբ: Էականը, սակայն, նրա համոզմամբ, շարունակության ապահովումն է: «Արտգործնախարարների հանդիպումից հետո ակնկալվում է ֆուտբոլային դիվանագիտության հերթական քայլը՝ նախագահների հանդիպումը Սամբուլում: Սահմանների բացման հարցում ես բավականին լավատես եմ, վերջին իրադարձությունները ցույց են տալիս, որ Թուրքիան եւս նախաձեռնող է արտաքին հարաբերությունների բարելավման ուղղությամբ», ասաց քաղաքագետը: Ամերիկահայ քաղաքագետ սահմանների բացման հարցում սփյուռքի գործոնը խոչընդոտ չի համարում: Օլիգարխներն այս հարցում շատ ավելի մեծ խոչընդոտ են, վստահ է բանախոսը: «Սահմանների բացումը Հայաստանում տնտեսական նոր իրավիճակ կստեղծի, ինչը չի կարող նպաստավոր լինել մենաշնորհային դիրք ունեցող օլիգարխների համար: Մրցակցային նոր պայմաններին նրանք կարող են եւ չդիմանալ», ընդգծեց նա:

Քաղաքագետ **Երվանդ Բոզոյանը** Ռիչարդ Կիրակոսյանի վերոնշյալ հիմնավորումը չի ընդունում: Նրա համոզմամբ, սահմանների բացման դեպքում որոշակի ժամանակի ընթացքում տնտեսվարողները կսովորեն գործել նոր պայմաններում: Նրան առավելապես այլ հարց է անհանգստացնում. «Արտերկրի մամուլում հաճախ է հնչում այն միտքը, որ սահմանների բացումը էական եւ կենսական նշանակություն ունի Հայաստանի համար: Սահմանների բացումը նույնքան կարեւոր է նաեւ Թուրքիայի համար: Սահմանների բացումը Թուրքիայի համար այսօր հսկայական PR քայլ է դարձել: Սահմանների փակ լինելը մեծ վնաս է հասցնում Թուրքիայի ներկայիս իմիջին: Այդ երկիրը կարծես թե ցանկանում է բացել սահմանները, նրան միայն պատրվակ է հարկավոր», նշեց Երվանդ Բոզոյանը: Միաժամանակ Թուրքիան փորձում է առավելագույն օգուտները կորզել սահմանի բացմամբ՝ հասնելով որոշակի զիջումների Հայաստանի կողմից: Քաղաքագետը համոզված է՝ Հայաստանը զիջման որեւէ ընտրություն չունի: «Լեռնային Ղարաբաղի խնդրում զիջման չի կարող գնալ: Արցախն այսօր մեր անվտանգության միակ երաշխիքն է, սա բոլորն են հաջ գիտակցում: Ինչ վերաբերում է ցեղասպանության ճանաչմանը, ապա Թուրքիան առայժմ տարակուսում է, թե ի վերջո, ինչ նպատակ ունի Հայաստանը ցեղասպանության ճանաչմամբ: Հայաստանում էլ դեռ հսկայակ չեն պատկերացնում ցեղասպանության միջազգային ճանաչման վերջնապատակը: Այս հարցերը կարելի է լուծել միմիայն երկխոսության ճանապարհով», նշեց Երվանդ Բոզոյանը:

Նիգյար Գյոքսելը ներկա ժամանակահատվածում Թուրքիայի կողմից ցեղասպանության ճանաչման հնարավորությունն իրատեսական չի համարում: Հետաքրքրությունը հասարակության մեջ հարցի նկատմամբ, այնուամենայնիվ, առկա է: Միաժամանակ իր հայ գործընկերներին նա վստահեցնում է, որ Թուրքիայի ձեռնարկած քայլերը հարաբերությունների բարելավման ուղղությամբ ամենեւին էլ PR ակցիա չեն: «Հարեւան երկրների հետ հարաբերությունների բարելավումը թուրքական արտաքին գերատեսչության օրակարգում է: Եվ սա միայն Հայաստանին չի վերաբերում: Թուրքիայի հարաբերությունները Միացյալ Նահանգների եւ Եվրամիության հետ այսօր շատ ավելի սառն են, քան 5 տարի առաջ: Եթե այդ պետությունների առջեւ այլ կերպ ներկայանալու խնդիր դրված լիներ, ապա Թուրքիան Հայաստանի հետ իր հարաբերությունները կփորձեր բարելավել 5 տարի առաջ», նշեց Նիգյար Գյոքսելը:

Երվանդ Բոզոյանը, սակայն, վստահ է. «Թուրքիան այսօր ձգտում է դառնալ տարածաշրջանային գերտերություն: 21-րդ դարում գերտերությունները ընկալվում են որպես կայուն եւ կանխատեսելի պետություն: Թուրքիայում բացակայում է միասնական քաղաքական դիրքորոշումը: Կան դրական փոփոխությունների ձգտող մի փոքր շերտ եւ ազգայնական տրամադրություններով մեծամասնություն: Այժմ գնդակը Թուրքիայի դարպասում է: Հայաստանը պատրաստ է հարաբերությունների բարելավմանը»:

ԱՐԵՎԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ

«ՓԱՍՏԱՐԿ» ԱԿՈՒՄԲՈՒՄ

Նորաստեղծ ՀԿ-ն կոչ է անում հաստատել սոցիալական արդարություն, իսկ քաղաքական գործիչներին՝ կարդալ Սերո Խանզադյան

Միլիցիայի հատուկ ջոկատների վետերանների նորաստեղծ միության նախագահ **Գրիշա Սարգսյանն** ու նախագահության խորհրդի անդամ **Արտակ Քոչարյանը** երեկ «Փաստարկ» ակումբում էին: Միլիցիայի հատուկ ջոկատներն ակտիվ մասնակցություն են ունեցել ղարաբաղյան պատերազմին եւ այս միավորումներն առանձին-առանձին գոյատեւել են մինչ օրս: Վերջերս գրանցվել է նոր միություն, որը միավորել է հատուկ ջոկատներին: Նորաստեղծ միության ազատամարտիկները ղեկավարների հետ երեկ ներկայացնում էին իրենց մտահոգությունները՝ Արցախի խնդրի, Մայնդորֆյան հուշակագրի շուրջը:

«Քաջ գիտակցում ենք, թե ինչպիսի ներքին եւ արտաքին վտանգի առջեւ է կանգնած ՀՀ-ն. հատկապես Կովկասում օր օրի ի հայտ եկող վտանգավոր իրադարձությունները: Մեր երկիրն այսօր կանգնած է ԼՂՀ անկախության եւ հայ դատի պահանջների միջազգային ճանաչման առջեւ: Հաշվի առնելով հարեւան Ադրբեջանի ռազմատենչ հայտարարությունները, որոշեցինք միավորվել մեկ դրոշի շուրջը», հայտարարեց Գրիշա Սարգսյանը:

Ներքին գործերի նախարարության, միլիցիայի հատուկ նշանակության ջոկատներից ստեղծված 5 հասարակական կազմակերպություններ՝ «Փառապանծ մարտիկները», «Վետերանների միությունը», «Միլիցիայի հատուկ նշանակության ջոկատները», «Միլիցիայի օպերատիվ հատկացված ջոկատը», «Միլիցիայի իրավապահների միությունը» անվանվեցին Միլիցիայի հատուկ նշանակության ջոկատների վետերանների միություն: Միությունն ունի շուրջ 4000 անդամ:

«Մեր միության ստեղծման նպատակն այն է, որ իշխանությունները ուշադրություն դարձնեն ազատամարտիկներին, հասատեն սոցիալական արդարություն, լուծեն իրավական, առողջապահական խնդիրներ՝ սոցիալապես անապահով ընտանիքների, զոհված ազատամարտիկների ընտանիքների նկատմամբ», հայտնում է նորաստեղծ ՀԿ-ի ղեկավարը:

Բանախոսը նկատել է, որ 2009-ի բյուջեի քննարկման ժամանակ կառավարության որոշմամբ «Մարտական խաչ» առաջին եւ երկրորդ կարգի կոչում ունեցող ասպետներին հետմահու բյուջեով գումար է նախատեսված:

«Մեր միությունն իր դժգոհությունն է հայտնում եւ կոչ է անում կառավարությանը, որ խտրականությամբ չվերաբերվեն այս հարցին, այլ արդարամիտ մոտեցմամբ»:

«92-ին կառավարությունը որոշում ընդունեց, որ արցախյան այն ազատամարտիկների, ովքեր մասնակցել են պատերազմին, սոցիալական ծառայությունների վարձերը 50 տոկոսով կվճարվեն: Եվ 97-ին նույն կառավարությունը սառեցրեց այդ որոշումը: Պահանջում ենք, որ կառավարությունը օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գա ԱԺ-ում, եւ ընդունվի ազատամարտիկի մասին օրենք, որպեսզի ազատամարտիկները պաշտպանված լինեն օրենքով, ոչ թե պահի տակ ընդունված որոշումներով»:

Ինչ վերաբերում է Արցախի ազատագրված տարածքների հանձնմանը, Գ. Սարգսյանը նշում է, որ հողերը չեն հանձնվում, հարցը պետք է դրվի համազգային քննարկման. Ղարաբաղի հարցն էլ հանրաքվեի միջոցով պետք է լուծվի:

«Նրանք ովքեր վիճարկում են տարածքների հայկական լինելու եւ չլինելու հարցը, թող հիշեն, որ բացի Ղարաբաղից, կա նաեւ Ղաշային Ղարաբաղ: Խորհուրդ կտամ կարդալ Սերո Խանզադյանի «Ղարաբաղը կրակների մեջ» գիրքը, որտեղ կան պատմական փաստեր եւ հիմնավորումներ: Պատմական փաստերով ապացուցված է, որ Լեռնային Ղարաբաղից տմարդիորեն անջատեցին Շահումյանի, Խանլարի, Դաշքեսանի եւ Շամխորի շրջանները: Սրանք Ղաշային Ղարաբաղի շրջաններ են եւ հայկական տարածքներ են: Եթե որոշ քաղաքական գործիչներ պատմությունից թույլ են, թող կարդան, որ սրանք բոլորը հայկական տարածքներ են. ուրեմն ազատագրված տարածքներն էլ հայկական են: Մենք կոչ ենք անում իշխանություններին, որ վերջ տան նվաստացուցիչ բանակցություններին եւ հանդես չգան խնդրողի կարգավիճակով: Մենք հաղթանակած կողմ ենք, մենք ապացուցել ենք, որ ուժեղ ենք եւ մենք պետք է խոսենք հաղթանակած կողմի դիրքերից եւ թելադրենք մեր կամքը»:

ՀԿ-ի ներկայացուցիչները ողջունում են երկրի ղեկավարի՝ ՀՀ-ում գրանցված 50 կուսակցությունների ներկայացուցիչների հետ հանդիպումը, եւ կոչ են անում, որ նախագահն իրենց հետ էլ հանդիպում ունենա:

ԳՅՈՒՄՐԻ

Մրցանակներ ծերերի հիմնախնդիրների լուսաբանման համար

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությունը 2002 թվականից, եվրոպական մի շարք հանձնաժողովների ֆինանսավորմամբ իրականացնում է «Տնային խնամք ծերերի համար» ծրագիրը, որի նպատակը միայնակ ծերերին հոգատար վերաբերմունք եւ կարեկից խնամք տրամադրելով, նրանց կենսակերպի բարելավմանը նպաստելն է: Գործնական աջակցության տարբեր ձեռնարկներից բացի, ծրագիրը ներառում է նաեւ հասարակության մեջ ծերերի հիմնախնդիրների ակտիվ քարոզչության միջոցառումներ: Այդ հիմնախնդիրների լուսաբանումը խթանելու եւ խրախուսելու նպատակով կազմակերպությունը սեպտեմբեր ամսին տարբեր լրատվանակարգերով բաց մրցույթ էր հայտարարել: Վերջինիս արդյունքներն ամփոփվեցին երեկ, Գյումրու «Հոկտեմբեր» կինոթատրոնի ճեմասրահում կազմակերպված ցերեկույթի ժամանակ:

Ինչպես նշեցին ծրագրի պատասխանատուները, մրցույթին մասնակցել են լրագրողներ, նկարիչներ, այլ ստեղծագործողներ Գյումրիից, Գավառից, Վանաձորից եւ մայրաքաղաք Երեւանից: Սրահում ցուցադրված գործերը տարբեր կողմերով ներկայացնում էին տարեցներին ու նրանց խնդիրները: Հավակնորդները հետաքրքրությամբ դիտեցին մրցույթում հաղթող ճանաչված, Վանաձորի «Լոռի» հեռուստաընկերության լրագրող Լուսինե Սարգսյանի հեղինակած «Մենության ձայնը» տեսաֆիլմը, որը նկարահանվել էր «Հայկական Կարիտասի» պատվերով եւ պատմում էր միայնակ մարդու կենցաղի, հույզերի ու մտահոգությունների մասին:

Լավագույն հեռուստառեպորտաժի համար սահմանված մրցանակին արժանացավ «Շանթ» ՀՌԸ լրագրող Արտակ Հովհաննիսյանը, լավագույն հոդվածի համար պարգեւատրվեցին «Կումայրի», «Շրջապատ» շաբաթաթերթերի լրագրողներ Լիդա Շաղգամյանը, Գուրգեն Ենգոյանը (Գյումրի), անկախ լրագրող Անի Գասպարյանը (Երեւան): Ներկայացված գեղանկարների գծով հաղթողներ ճանաչվեցին Գյումրիից Էմին Սաֆարյանը, ծրագրի շահառու Սերգեյ Միրզոյանը, Վանաձորից Համլետ Ջաղինյանը, լուսանկարի գծով՝ «Շանթի» օպերատոր Արտյոմ Խաչատրյանը: Մրցույթի եւս մի խումբ մասնակիցներ պարգեւատրվեցին նվերներով:

Գ. Մ.

ՕՐԱԿԱՐԳ

Այսօր

◆10.30- ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի դահլիճում (Աբովյան 52ա) տեղի կունենա գիտաժողով՝ նվիրված հայ մեծ գրող Լեւոն Շանթին:

◆11.00- «Գոնլդեն Թյուլիփ» հյուրանոցում տեղի կունենա «Փաստաբանություն. ներկա վիճակը եւ զարգացման հեռանկարները ՀՀ-ում» թեմայով իրավաբան ուսանողների հանրապետական հինգերորդ գիտաժողովի եզրափակիչ՝ բանավոր փուլը:

◆12.00- Փաստաբանների պալատում (Զաֆյան 3) տեղի կունենա քննարկում «Դատական համակարգը եւ փաստաբանական ինստիտուտը» թեմայով:

◆12.00- «Իրավունք de facto» ակումբի հյուրն է ՀՈԱԿ ատենապետ Հարություն Առաքելյանը:

◆13.00- «Ուրբաթ» ակումբի հյուրերն են ՀՅԴ Նիկոլ Աղբալյան ուսանողական միության անդամները: Նրանք կխոսեն սփյուռքահայ եւ օտարերկրացի ուսանողների վիզայի հետ կապված իրավունքների պաշտպանության խնդիրների մասին:

◆13.00- ՀԺԿ գրասենյակում տեղի կունենա «Միացում» ազգային նախաձեռնության եւ «Ի պաշտպանություն ազատագրված տարածքների» կանանց միության կազմակերպած «կլոր սեղանը»:

◆14.00- «Դե ֆակտո» ակումբի հյուրն է Միխայիլ Բաղդասարովը, թեման՝ ավիաընկերությունը եւ ճգնաժամը:

◆14.00- ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետում տեղի կունենա իրավաբանական ձեռնարկի շնորհանդեսը, որին կհաջորդի առաջին սեմինար-քննարկումը:

«Երուսաղեմում հայ հոգեւորականից պահանջվում է նաեւ զինվոր լինել»

Երուսաղեմ այցելած եւ Հին քաղաքի թոհուբոհի մեջ հայտնված ամեն ոք լավ գիտի, որ այնտեղ ամեն պահ կարելի է մոլորվել, հրմշտվել ու ջնջել տարբեր լեզուներով գոռում-գոչյուններից, անիրական թվացող պատկերներից ու հայտնվել անհեռակայելի վիճակների մեջ: Ահա թե ինչու Հին քաղաք գրեթե չեն այցելում Իսրայելի այլ քաղաքներում բնակվող հրեաները, որոնց մեծ մասը գաղափար անգամ չունի Հայաստանի մասին եւ Արմենիան ջփոթում է Ալբանիայի հետ: Ի տարբերություն նրանց, երուսաղեմաբնակ հրեաները լավ գիտեն հայերի մասին եւ եբրայերենով նրանց առաջին արձագանքը լինում է. «Օ՜, հայերը: Նրանք շատ հարուստ են Հին քաղաքում»: Երուսաղեմի պատրիարքարանին պատկանող տարածքներն, անշուշտ, նախանձաբարժ են ոչ միայն հրեաների համար: Դա հասկանալու համար երեւի թե ամեն մի հայաստանցի պիտի մեկնի այնտեղ, սեփական աչքերով տեսնելու եւ համոզվելու, որ այդ ամենը պահել, պահպանելու համար իմաստնությունից բացի զորեղ կամք եւ ուժ է պետք, նաեւ զինվորականի զգաստություն, ամեն վայրկյան ակնկալվող սադրանքների դեմն առնելու համար:

Դրանում վերջերս համոզվեցին այն 48 հայաստանցի ուխտավորները, որոնք Երուսաղեմ էին մեկնել Արարատյան հայրապետական թեմի Արտաշատի հոգեւոր հովիվ Մխիթար քահանա Ալոյանի հետ: Նրանց մեջ է եղել նաեւ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի Գեւորգյան ճեմարանի քարտուղար Անդրանիկ Հակոբյանը, որի, ինչպես նաեւ մյուսների, Երուսաղեմից ունեցած հիացական տպավորությունները միախառնվել են Գյուս Խաչի տոնի ժամանակ Ս. Հարության տաճարում հայ եւ հույն հոգեւորականների եւ իսրայելցի ոստիկանների հետ տեղի ունեցած ընդհարման պատճառած ցավագին զգացման հետ:

Իսրայել մեկնել են Վրաստանի տարածքով, Թել-Ավիվի օդանավակայանում նրանց դիմավորել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանի տեսուչ հայր Թեոդորոսը: Ուխտավորների համար նախատեսված 10-օրյա հագեցած ծրագրի առաջին օրն անցել է Սուրբ Հակոբեանց վանքում, շրջել են հայկական թաղամասում, եղել Թարգմանչաց վարժարանում, հանդիպել Երուսաղեմի պատրիարք Թորգոմ արք. Մանուկյանի հետ: «Եղանք նաեւ Ժառանգավորաց հոգեւոր վարժարանում, որտեղ սովորում է ընդհանուր թվով 34 ուսանող, բոլորի համար ստեղծված են ուսման եւ հանգստի հարմարավետ պայմաններ, դասախոսների հիմնական կազմը Հայաստանից է, որոշ առարկաների համար դասախոսների կարիք կա: Ուսանողների մեծ մասը հավաքագրված է Հայաստանից, Վրաստանից: Զարմանալի էր, որ երկու ուսանող անցած տարի եկել էին Դիարբեքիրից (Թուրքիա): Նրանք եղբայրներ են, սկզբում ոչ մի բառ չեն իմացել հայերեն, հիմա վարժ խոսում են», պատմում է **Անդրանիկ Հակոբյանը**: Ուխտագնացության երրորդ օրը նրանց համար մի ուրիշ խորհուրդ է ունեցել, որովհետեւ այդ օրը՝ Գյուս Խաչի տոնին հայ հոգեւորականների թափորի հետ պիտի այցելեին Սբ. Հարության տաճար ու մտնեին Հիսուսի գերեզմանը համարվող խորհրդավոր խորան: «Տաճար հասնելով այնպիսի տպավորություն ստացանք, կարծես հույները ինչ-որ բանի էին նախապատրաստվում. արարողությունը սկսվելուց երկու ժամ առաջ այնտեղ էին Բի-Բի-Սի, Սի-Էն-Էն, ինչպես նաեւ թուրքական Էռ-Տե-Էռ հեռուստաընկերությունների լրագրողները: Հավատացյալներն ասում էին, որ վերջին մի քանի տարիներին տաճարի մոտ լրագրողներ չէին երեւացել: Դա հուշում էր, որ հույները ինչ-որ բան էին ծրագրել:

Երբ հայ հոգեւորականների թափորը Արիս սրբազանի գլխավորությամբ շարժվեց դեպի Հիսուսի գերեզման, առաջին պտույտն անելուց հետո հույները հարձակվեցին նրանց վրա: Սկզբում հայ հոգեւորականներին հաջողվեց կանխել հույների հարձակումը շնորհիվ իսրայելցի ոստիկանների զգոնության, սակայն երբ սկսվեցին բանակցությունները Արիս սրբազանի, հույն եպիսկոպոսների եւ Երուսաղեմի ոստիկանապետի միջեւ, հայ եւ հույն հոգեւորականները նորից ընդհարվեցին ոստիկանների կոչս վերաբերմունքի պատճառով: Այդ բախումը կարճ ժամանակ անց վերածեց ոստիկանների ու ճեմարանականների միջեւ բախման, քանի որ հույները արդեն հետ էին քաշվել: Ընդհարման պատճառով բավականին հոգեւորականներ էին վնասվել, տուժել էին նաեւ ոստիկանները, ինչը մեզ ձեռնտու չէր, քանի որ Իսրայելում օրենքով արգելված է ոստիկանին հարվածելն ու վիրավորելը, դրա համար շատ խիստ պատժամիջոցներ են կիրառվում», պատմում է Անդրանիկ Հակոբյանը:

Մեր ճեմարանականներից ձերբակալվեց Նինոնմինդայում ծնված Աթանեսը: Երբ իսրայելցի ոստիկանները նրան Հին քաղաքի միջով տարել են Դավթի տաճարի մոտ գտնվող ոստիկանատուն, նա ամբողջ ճանապարհին երգել է «Մենք քաջ տոհմի զավակներն ենք» երգը: Ոստիկանատանը նրան պահել են մի գիշեր: Հետո Աթանեսն ասել է, որ այնտեղ իրեն ծեծել են: Հնգօրյա տնային կալանքից հետո ուխտավորները գնացել են Աթանեսին տեսության: «Շատ ջերմ հանդիպում էր, մեզ համար ուրախալի էր տեսնել, որ նա վնասվածքներ չէր ստացել եւ բոլորովին ընկճված չէր: Կարծում եմ, նման միջադեպերը պետք է լուծվեն բարձր մակարդակով, որպեսզի հույն եւ հայ հոգեւորականները որեւէ խնդիր չունենան ծեսեր իրականացնելու ժամանակ, այլապես բախումները կարող են շարունակական լինել: Մեզ համար ցավալի էր, որ այդ ընդհարումից հետո այլեւս չկարողացանք հասնել Քրիստոսի գերեզմանի մոտ, փաստորեն, մեր ծրագիրն այնտեղ անավարտ մնաց:

Նորից պիտի ասեմ, որ այդ ամբողջ իրարանցումը կազմակերպել էին հույները. Սբ Հարությունում սոսկալի աղմուկ աղաղակ էր, կային տարբեր երկրներից եկած ուխտավորներ, ուղղակի անհավատալի վիճակ էր, որը տեւեց մոտ մեկ ու կես ժամ:

Այդ ամենը տեսնելուց հետո հասկանում ես, որ Երուսաղեմում հայ հոգեւորականից պահանջվում է նաեւ զինվոր լինել, մանավանդ որ հույն հոգեւորականները բավականին մեծաքանակ են: Ցավոք, Երուսաղեմում մեր հոգեւորականների թիվը մեծ չէ եւ հենց այդ պատճառով հույներն իրենց քանակային առավելությունը ձգտում են օգտագործել իրենց հարցերը լուծելու համար: Լավ կլինի, որ Երուսաղեմում ունենանք կազմակերպված եւ ֆիզիկապես առողջ ճեմարանականներ, որպեսզի նրանք կարողանան Հայ եկեղեցու իրավունքները անվախորեն պաշտպանել: Նկատելի էր, որ ուսանողների մեջ ֆիզիկապես ուժեղ տղաներ չկային, հատկապես Հայաստանից գնացածները շատ փոքրամարմին էին», ասում է Հակոբյանը:

Չնայած միջադեպի պատճառած տխրությունը թանձրացել է նրա սրտում, սակայն Երուսաղեմի բացառիկ գեղեցկությունը հիշելիս դեմքին իսկույն ժպիտ է հայտնվում: «Շատ քաղաքներում էի եղել, բայց Երուսաղեմն արտասովոր գեղեցիկ էր: Հիմա ուխտագնացությունից հարցուփորձ անողներին խորհուրդ եմ տալիս անպայման գնալ ու տեսնել այդ զարմանահրաշ քաղաքը: Անմոռանալի են նաեւ Հորդանան գետը, Գալիլիայի եւ Մեռյալ ծովերը եւ քրիստոնեական այն բոլոր սրբավայրերը, որ հասցրեցինք տեսնել ուխտագնացության տասն օրերի ընթացքում»:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Ստեղծել լիարժեք գործող տեղական ինքնակառավարման համակարգ

Արցախում ընտրական կարգով ձեւավորվող տեղական ինքնակառավարման ինստիտուտը գործում է 1998 թվականից: Չնայած անցած տասնամյակում այդ ուղղությամբ արդեն որոշակի փորձ ձեռք է բերվել, սակայն տեղական ինքնակառավարման մարմինների համակարգը դեռեւս ցանկալի մակարդակի վրա չէ:

Այս մասին արտահայտվել է ԼՂՀ նախագահ **Բակո Սահակյանը** վերջերս ՏԻՄ ղեկավարների հետ Ստեփանակերտում ունեցած հանդիպման ժամանակ: Նա մասնավորապես ասել է. «Մեր պետության կառավարման համակարգում տեղական ինքնակառավարման մարմինները թույլ օղակներից են, ինչն արտահայտվում է հատկապես վարչական ոլորտում: Բավարար չափով չէ զարգացած կառը ինչպես տեղական, շրջանային եւ հանրապետական մարմինների, այնպես էլ շրջանային կառավարման օղակների միջեւ: Շատ դեպքերում համայնքների ղեկավարները նույնիսկ չեն տիրապետում իրենց ղեկավարած օղակներում տիրող իրավիճակին: Նրանցից ոմանք տեղեկատվություն չունեն անգամ իրենց գյուղերում արտադրվող ապրանքների ծավալների մասին: Զգալի տարբերություններ են լինում ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության տարածքային բաժին նրանց ներկայացրած ցուցանիշների եւ իրական թվերի միջեւ: Հաճախ այդ անհամապատասխանությունը հասնում է մինչեւ 50 տոկոսի: Տեղերում թերանում են նույնիսկ պատշաճ ձեւով վարել տնային տնտեսությունների, բնակչության թվաքանակի եւ այլ կարեւոր ցուցանիշների հիմքը հանդիսացող համայնքի գրանցամատյանները: Այսպիսի վիճակ է նույնիսկ այն բնակավայրերում, որտեղ բնակչության թիվը չի անցնում մի քանի տասնյակից: Քչերն են գիտակցում, որ համայնքը՝ իր բոլոր բնութագրիչներով հանդերձ, այն սկզբնական օղակն է, որի վրա խարսխվում է մեր ամբողջ տնտեսությունը», ասել է հանրապետության նախագահը:

Բակո Սահակյանը նաեւ դժգոհություն է հայտնել, որ վարձակալման հիմունքներով հողօգտագործող համայնքի անդամների, ինչպես նաեւ այլ ֆիզիկական անձանց անշարժ գույքի նկատմամբ իրավունքները չեն գրանցվում անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանումներում: Դա գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման օրենսդրության պահանջների խախտում է, շեշտել է նա:

Նախագահը եւս մի բացասական երեւույթ է նշել: Ըստ նախագահի, ոչ հազվադեպ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներ են ընտրվում այնպիսի անձինք, ովքեր ո՛չ մասնագիտական, ո՛չ էլ բարոյական տեսակետից չեն համապատասխանում իրենց զբաղեցրած դիրքին: Դրա անցանկալի հետեւանքն այն է, որ պառակտում է առաջացնում համայնքներում եւ ստեղծում անառողջ մթնոլորտ, վտանգում պետական ռազմավարական նշանակություն ունեցող ծրագրերի հաջող իրականացումը:

Կարեւորելով ստորին օղակների նախաձեռնության ցուցաբերումը, նախագահն անթույլատրելի է համարել պատասխանատվությունը այլ օղակների, հատկապես վերադասի վրա բարդելու գործելաոճը, որի կապակցությամբ նա նշել է, որ անհրաժեշտ է ավանդույթ դարձնել շրջանների եւ ՏԻՄ ներկայացուցիչների համաժողովների անցկացումը երկրի բարձրագույն ղեկավարության մասնակցությամբ, որտեղ պետք է քննարկվեն կատարված աշխատանքների արդյունքները, ներկայացվեն տիրող իրավիճակը, առկա հիմնախնդիրները եւ հետագա անելիքները:

ԼՂՀ-ում համայնքների ավելի քան 95 տոկոսը գյուղական է: Հանրապետության համախառն ներքին արդյունքի զգալի մասը գոյանում է գյուղատնտեսությունից, եւ թեպետ 2008-ի ինն ամսվա արդյունքներով գյուղատնտեսության համախառն արտադրանքը նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատ աճել է շուրջ 40 տոկոս աճ, այնուամենայնիվ նախագահն անբավարար է համարել գյուղատնտեսության ճյուղի կշիռը համախառն ներքին արդյունքում: «Մենք շարունակում ենք հանրապետություն ներկրել սպառվող գյուղմթերքների կեսից ավելին: Եվ դա այն դեպքում, երբ մեզ մոտ առկա են բոլոր հնարավորությունները՝ ապահովելու ոչ միայն ներքին շուկայի պահանջները, այլեւ դուրս գալու արտաքին շուկա էկոլոգիապես մաքուր եւ մրցունակ արտադրանքով: Այդ հիմնախնդրի լուծման համար պետք է առաջնահերթ ուշադրություն դարձնել գյուղտեխնիկայի եւ կադրերի, ինչպես նաեւ ինտենսիվ կոլտուրաների արտադրության մասնագիտացման հարցերին, ինչը կնպաստի գյուղատնտեսական արտադրության ծավալների կտրուկ աճին: Այս աշխատանքների համակարգման եւ վերահսկման մեջ մեծ է գյուղատնտեսության նախարարության, շրջվարչակազմերի, ինչպես նաեւ տեղական ինքնակառավարման մարմինների դերը», ընդգծել է Բակո Սահակյանը: Նախագահն անդրադարձել է նաեւ գյուղական վայրերում ոռոգման, վերամշակող արդյունաբերության, առողջապահության, կրթության եւ մշակույթի բնագավառների զարգացման խնդիրներին: Դրանց շարքում Բակո Սահակյանը հատկանշել է գյուղերի տեղեկատվությամբ ապահովվածության խնդիրը: «ԼՂՀ տարածքում Արցախի հանրային հեռուստատեսության ծրագրերն ամբողջությամբ հեռարձակվում են 118, իսկ մասնակիորեն՝ 36 գյուղական համայնքներում: 98 համայնքներում մարդիկ ընդհանրապես զրկված են մեր հեռուստածրագրերը դիտելու հնարավորությունից: Սա հանրապետության հիմնական խնդիրներից մեկն է», ասել է նա: Նախագահը հանձնարարել է կառավարությանը՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել մինչեւ 2009 թվականի վերջը հանրապետության ամբողջ տարածքում Արցախի եւ Հայաստանի հանրային հեռուստաալիքների հեռարձակումն ապահովելու ուղղությամբ:

ԿԻՄ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Ստեփանակերտ

ԱԶԳ
27 ՆՈՅԵՄԲԵՐ 2008 ԷՋ Ա

ՀԱՎԵԼՎԱԾ ԿԻՆՈ

***Սեւծովյան ավազանի եւ կովկասյան տարածաշրջանի համագործակցության երկրների կինոդպրոցի բացումը կարելի է համարել այս ամսվա երեւանյան կինոհրաշարաձությունը՝ իրանցի հանրահայտ կինոբեմադրիչ Աբբաս Քյառոստամիի վարպետության գործնական դասերով, հայ, վրացի, թուրք եւ պարսիկ երիտասարդ կինոբեմադրիչների ջփումով եւ մեկ շաբաթվա ընթացքում մոտ 15 կարճամետրաժ ֆիլմերի ստեղծումով: Երեւանի կենտրոնական փողոցներում վաղուց այդքան կինոխցիկներ չէին երեւացել: Ոգեւորված էին հատկապես Աբբաս Քյառոստամիի սաները, որոնք առաջին անգամ էին Հայաստանում ու ջանում էին կինոխցիկով որսալ իրենց գրավող բոլոր կադրերը: «Ոսկե ծիրան» կինոփառատոնի տնօրեն Հարություն Խաչատրյանին եւ Աբբաս Քյառոստամիին սկզբում զարմացրել է հայաստանցիների պասիվությունը, սակայն դասընթացի ավարտին նրանց ֆիլմերը դիտելուց հետո դժգոհելու պատճառ այլեւս չեն ունեցել: «Հայկական կինոն կարիք ուներ երիտասարդ արյան, ինչի համար եւ ստեղծվեց այս կինոդպրոցը շնորհիվ «ՎիվաՍել» ընկերության աջակցության: Վարպետների հետ ջփումը չափազանց կարեւոր է. Ատոմ Էգոյանի, Աբբաս Քյառոստամիի, Վիմ Վենդերսի եւ այլոց մեկ դասը համարում եմ ավելի օգտավետ հայաստանյան բուհերի մեկնյա դասընթացից: Դա ոչ թե կինոգիտելիքի փոխանցում է, այլ կոնկրետ աշխատանք ֆիլմի վրա: Փաստորեն, մեկ շաբաթվա ընթացքում ունեցանք մոտ 15 կարճամետրաժ ֆիլմ. այդքիսի արդյունք չէր կարող ստանալ եւ ոչ մի ինստիտուտ նույնիսկ ամբողջ տարվա ընթացքում: Այնպես որ, մշակույթի նախարարության եւ ազգային կինոկենտրոնի հետ պիտի շարունակենք այս դասընթացը, որպեսզի տարածաշրջանի երիտասարդ ռեժիսորների հայացքն ուղղված լինի Հայաստանին: Այդպիսի վարպետների դասընթացներին մասնակցելը յուրաքանչյուր երիտասարդ կինոբեմադրիչի երազանքն է: Հաջորդ դասընթացը կլինի փետրվարին կամ մարտին, տեսնենք, թե այդ ժամանակ որ կինովարպետն ազատ ժամանակ կունենա, նրան էլ կհրավիրենք», ասաց Հարություն Խաչատրյանը:*

Նոյեմբերի 11-17-ը անցկացված կինոդասընթացի նախավերջին օրն ինձ հաջողվեց զրուցել Աբբաս Քյառոստամիի հետ՝ «Մոսկվա» կինոթատրոնում, որտեղ նա տպասում էր նկարահանումներից ուր որ է վերադարձող մասնակիցներին: Նրա պատասխանատվության զգացումն ստիպեցրեց ինձ. Քյառոստամին մերժում էր տեղյան որեւէ վայր գնալու ոսկեծիրանային ամեն մի առաջարկ, ասելով, որ ուսանողների հետ շատ գործ ունի անելու եւ պետք է նրանց կողքին լինի:



Աբբաս Քյառոստամին «Մոսկվա» կինոթատրոնում

- Ձեր կարծիքով, ի՞նչ դեր կունենա կինոդպրոցը Հայաստանում եւ հարեւան երկրներում կինոարվեստի զարգացման համար:

- Կարծում եմ, կարեւոր նշանակություն կունենա, քանի որ մեր երկրներում շատ քիչ կինոդպրոցներ կան: Մեր ուսանողների համար հրաշալի կենտրոն կդառնա ծանոթանալու եւ միասին աշխատելու համար: Վարպետության գործնական դասերի ամենամեծ առավելությունն այն է, որ ուսանողները կարողանում են ֆիլմեր նկարահանել: Համալսարաններում նրանք առավելապես ստանում են տեսական գիտելիքներ, իսկ այստեղ տեսականը զուգակցվում է գործնականի հետ, ինչն, անշուշտ, ավելի արդյունավետ է:

- Ինչ ձեւաչափ ընտրեցիք դասընթացի համար, ի՞նչ հաջողվեց անել մեկ շաբաթում:

- Ընտրեցի մի քանի սյուժե եւ ուսանողներին հանձնարարեցի ֆիլմեր նկարահանել դրանց հիման վրա: Վարպետության դասեր անցկացնելու իմ փորձը ցույց է տվել, որ այդպես աշխատանքն ավելի արդյունավետ է լինում: Եթե ուսանողներին ազատ ես թողնում, նրանք չեն կարողանում կողմնորոշվել, իսկ այսպես ավելի հստակ են աշխատում: Հորինում էի բավականին պարզ սյուժեներ, որպեսզի նրանք կարողանային չնչին գումարով, նույնիսկ իրենց գրպանում եղածով ֆիլմ նկարահանել:

- Հարեւան երկրների երիտասարդ կինոբեմադրիչների հետ աշխատելիս կինոմտածողության ի՞նչ տարբերություններ նկատեցիք:

- Բոլոր երկրներում հիմա հատուկ ուշադրություն են դարձնում մեծ ծախսերով նկարահանված ֆիլմերին: Դա արեւմտյան կինոյի ազդեցությունն է, որից ձեւավորված մտածողությունը բնորոշ է գրեթե բոլոր երիտասարդներին: Այսպիսի դասընթացներով փորձում ենք նրանց հակառակն ապացուցել, սովորեցնել, որ բարձրարվեստ ֆիլմ կարելի է ստեղծել ոչ թե խոշոր գումարով, այլ սովորական մարդկանց կյանքն արտացոլելով:

-Կինոդպրոցի բացման առիթով Փարաջանովի թանգարանում հրավիրված մամլո ասուլիսում ասացիք, որ ձեր նպատակն անկախ կինո ստեղծելն է, որովհետեւ կինոն այսօր ծառայում է կապիտալիզմին եւ որպես արվեստի տեսակ անհետանում է: Նաեւ նշեցիք, որ անկախ եւ բարձրարվեստ կինո ստեղծելու համար պետք է նվազեցնել ֆինանսական միջոցները: Մեծ ծախսերի փոխարեն պետք է հենվել մտքի ու գաղափարի վրա եւ ստեղծել նոր կինոարվեստ:

- Դա ոչ թե մեր ընտրությունն է, այլ միակ ձեւը բարձրարվեստ ֆիլմեր նկարահանելու: Նախորդ օրը դիտեցի Հարություն Խաչատրյանի նոր՝ «Սահման» ֆիլմը եւ ոտղակի հիացած եմ: Նրան հարցրեցի, թե քանի՞ օր է ֆիլմը ցուցադրվելու Հայաստանում: Ասաց՝ երկու օր: Ցավալի փաստ է, որ այս որակի ֆիլմը, որի վրա կինոբեմադրիչն աշխատել է երկու տարի, ցուցադրվելու է միայն երկու օր: Մեր դասընթացների նպատակը նաեւ երիտասարդներին այս տեսակի կինոյի հետ ծանոթացնելն է, քանի որ այդ կինոն դուրս է արդի կինոհեղեղից:

- Այդ որակի կինոն մասսայական հանդիսատես չունի գրեթե ամբողջ աշխարհում: Ի՞նչ եք կարծում, դա կապված է մարդկանց մտավոր եւ հոգեւոր պահանջների աղքատացման հետ, թե՞ գոյություն ունի մեկ այլ պատճառ:

- Առաջին պատճառն այն է, որ ֆիլմ նկարահանելու համար միջոցներ են հարկավոր, իսկ գումար տրամադրողները սովորաբար թելադրում են իրենց ճաշակը, պահանջները: Չեմ կարող ասել, որ մենք մեր աշխատանքով կարող ենք պայքարել դրա դեմ ու հաղթել, բայց հենց այն հանգամանքը, որ բարձրարվեստ ֆիլմեր նկարահանվում են թեկուզ երկու տարին մեկ, նշանակում է՝ այդ տեսակի կինոն դեռ գոյություն ունի:

- Հայաստանում քչերը գիտեն, որ դուք նաեւ պոետ եք: Ցավոք, ձեր բանաստեղծությունները թարգմանված չեն հայերեն: Միջազգային մամուլում ձեր մասին գրված հոդվածներում նշվում է, որ ձեր ֆիլմերը արտացոլանքն են ձեր պոեզիայի: Փաստորեն, ձեր ֆիլմերի բանաստեղծականությունը բխում է ձեր պոետիկ խառնվածքից:

- Բանաստեղծություններ սկսել եմ գրել ֆիլմեր նկարահանելուց առաջ: Կարծում եմ, բոլոր արվեստները ձգտում են հասնել բանաստեղծության: Եթե արվեստը բանաստեղծական չէ, ուրեմն արժեքավոր չէ:

- Համաձա՞յն եք այն մտքի հետ, որ կինոարվեստն ի զորու է փոխել մարդկանց աշխարհընկալումը:

- Այդ հարցի պատասխանը շատ դժվար է. համաձայնելու դեպքում նշանակում է, որ շատ լավատես եմ ու միամիտ, իսկ չհամաձայնելու դեպքում, որ անհույս եմ ու հոռետես, ինչը լավ բան չէ: Ինչպե՞ս կարող էր Հարություն Խաչատրյանի ֆիլմը չազդել ինձ վրա, երբ նա կարողացել է յուրահատուկ ձեւով ինձ ներկայացնել բոլորովին նոր կերպար կինոյում: Այդպիսի բան ես ոչ մի տեղ չէի տեսել: Աչքերիդ առաջ գոմեշ է, որին նայելիս զգում ու հասկանում ես, որ նա էլ մտածողություն ու զգացմունքներ ունի: Այսօր աշխարհում նկարահանվում են ֆիլմեր, որոնց հերոսները պոռնիկներ են, մախաղներ, մարդասպաններ, որոնց չի կարելի մարդ կոչել: Իսկ Հարություն Խաչատրյանի ֆիլմում տեսնում ենք մի գոմեշ, որն այդ բոլոր հերոսներից շատ ավելի մարդկային է:

Ինչպե՞ս կարող է այդպիսի կինոն չազդել ինձ վրա ու չփոխել իմ աշխարհընկալումը: Ուրեմն, հիմա կարող եմ ձեր նախորդ հարցին հստակ պատասխանել՝ այո՛, այս ֆիլմն ինձ վրա այնքան ուժեղ տպավորություն թողեց, որ երբեք չեմ մոռանա:

-Կինոն ձեզ օգնում է արտել այս աշխարհում, թե՞ ձեր մասնագիտությունն է, ինքնարտահայտման միջոցը:

- Դա իմ մասնագիտությունն է եւ ինձ հնարավորություն է տալիս իմ ներաշխարհում եղածն ու կուտակվածը փոխանցելու մարդկանց: Այդ ներքին կարոտը ստեղծելը բավականին դժվար է, բայց երբեմն ստացվում է:

- Ձեր ֆիլմերը պարզ ու հասարակ մարդկանց մասին են, որոնց կենսափիլիսոփայությունը կինոդիտողի մեջ առաջացնում է սեր, գթասրտություն, տանում է ինքնաճանաչման եւ ինքնամաքրման: Կարո՞ղ ենք ասել, որ ձեր արվեստով ձգտել եք հենց դրան հասնել:

-Արվեստում ամեն բան իմաստ ունի, ստեղծագործելու ժամանակ մեր մտքում անպայման պետք է նպատակ լինի: Իմ կարծիքով, ֆիլմը խաղարկային է, վավերագրական, թե անիմացիոն, նրա ամենակարեւոր հատկանիշը մարդկանց ինչ-որ բան ասելն է: Նկատի՞ չունեմ, որ բոլոր ֆիլմերը մեզ նոր բան են ասում այս աշխարհի եւ մարդկանց կյանքի մասին: Ամեն բան լսել ենք ու անցել: Կարեւորն այն է, թե արվեստագետն ինչպես է իր խոսքը հասցնում հանդիսատեսին եւ ազդում նրա վրա: Նա, ով ավելի հարուստ, խորն ու բանաստեղծական է ասում իր խոսքը, հենց նրա արվեստն էլ ազդում է մեզ վրա:

- Շնորհակալ եմ, որ այդքան զբաղված լինելով, համաձայնեցիք ժամանակ տրամադրել այս զրույցի համար: Կինոդպրոցի բացումը ձեզ Հայաստան բերող երկրորդ առիթն էր, իսկ ե՞րբ կլինի երրորդը:

- Ձեր երկրում ինչ-որ գրավիչ, ձգող բան կա ինձ համար: Մեկ-երկու այցն, իրոք, բավականին քիչ է, եւ առիթի դեպքում անպայման կգամ:

Հարցազրույցը վարեց
ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԸ

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Մարի Գուլբիանի (Վրաստան)- Նկարահանել եմ կարճամետրաժ եւ գեղարվեստական ֆիլմեր, հիմա աշխատում եմ վավերագրական ֆիլմի վրա: Աբբաս Քյառոստամիի մասին վաղուց էի լսել, դիտել էի նրա ֆիլմերը, որ այնքան հոգեհարազատ են ինձ: Երբ իմացա Հայաստանում կինոդպրոց է բացվում եւ նա վարպետության գործնական դասեր է տալու, միանգամից շտապեցի այստեղ: Հոյակապ դասընթաց էր, որի ժամանակ ֆիլմ նկարահանեցի Քյառոստամիի հանձնարարած սյուժեով, ճիշտ է, փոքր, բայց հետաքրքրական աշխատանք ստացվեց:

Դիանա Կարդումյան (Հայաստան) - Ավարտել եմ Երեւանի կինոյի եւ թատրոնի ինստիտուտը, նկարահանել եմ կարճամետրաժ 4 ֆիլմ, հիմա աշխատում եմ նոր սցենարի վրա՝ Կանադայի հայկական կինոփառատոնի աջակցությամբ: Այս դասընթացը մեզ նախեւառաջ ցույց տվեց, թե մեր հարեւան երկրի կինոռեժիսորը ինչքան պատասխանատու է իր ուսանողների հանդեպ: Մի բան, որ մեզ մոտ շատ է պակասում, բոլորն ասում են՝ «Գնացեք, նկարահանեք», բայց ոչ ոք չի հետեւում մեր աշխատանքին: Ինձ շատ դուր եկավ Աբբաս Քյառոստամիի արտացավ վերաբերմունքն իր ուսանողների հանդեպ: Մի կողմից տխրեցի, որ մենք զրկված ենք դրանից, մյուս կողմից՝ դիտելով նրա ուսանողների ֆիլմերն, ինձ ավելի ինքնավստահ զգացի:

Չեմ Օզքուֆեչի (Թուրքիա) - Ինձ համար ամենակարեւորը հարեւան երկրներից եկած կինոռեժիսորների հետ ջփվելու հնարավորությունն էր: Երեւանի եւ Քյառոստամիի անունները լսելուն պես ամեն ջանք թափեցի այստեղ գալու: Սա հրաշալի հանդիպում էր Քյառոստամիի հետ, նա շատ սիրալիր էր բոլորիս հանդեպ: Ինձ համար ուրախալի էր նաեւ հայաստանցիների հետ ծանոթանալն ու միասին ֆիլմ նկարահանելը: Կարելի է ասել, սա առաջին հայ-թուրքական համատեղ արտադրությունն էր պատմության ընթացքում:

Ադել Յարադի (Իրան)- Ես Քյառոստամիի ուսանողներից եմ, Իրանում մասնակցում եմ նրա վարպետության դասերին, բայց այս կինոդպրոցը յուրահատուկ էր այն առումով, որ աշխատեցինք հարեւան երկրների ռեժիսորների հետ: Նրանցից յուրաքանչյուրը յուրահատուկ էր իր երկրի լեզվով ու կինոյով: Ծանոթացանք նրանց մոտեցումներին, դիտեցինք նրանց ֆիլմերը: Հոյակապ էր տարբեր մշակույթների հետ ծանոթանալը, ուսանելի այնքան բան կար: Հայաստան գալուց առաջ չգիտեի, որ այսքան գեղեցիկ երկիր է, ջերմ ու ջփման մեջ հաճելի մարդկանցով: Ես անպայմա՛ն, անպայմա՛ն նորից կգամ այստեղ:

Սփյուռք

Էրիֆ Նազարյանը Ամերիկյան կինոակադեմիայի թոշակառու

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

Տինգ նոր կինոսցենարիստներ հաղթող են ճանաչվել Ամերիկյան կինոարվեստի եւ գիտության ակադեմիայի («Օսքարի» տան) 23-րդ Դոն եւ Ջի Նիֆոլ հեղինակավոր եւ բարձր թոշակին արժանանալու մրցույթում: Այն հանձնվում է լավագույն սցենարների հեղինակներին՝ մեկ տարում լիամետրաժ ֆիլմի սցենար գրելու եւ զարգացնելու համար: Այս տարվա սցենարական մրցույթին ներկայացվել է 5224 կինոսցենար: Հաղթողների երջանիկ հնգյակի մեջ է նաեւ ամերիկահայ երիտասարդ կինոբեմադրիչ եւ սցենարիստ, այս տարվա «Ոսկե ծիրան» կինոփառատոնում իր «Կատույտ ժամը» ֆիլմի համար 3 մրցանակների արժանացած Էրիֆ Նազարյանը՝ «Հսկաները» սցենարի համար: 22 տարվա ընթացքում Էրիֆը այս բարձր պարգեւին արժանացած առաջին հայն է: Այս տարի դատակազմը ղեկավարել է 1992-ին նույն թոշակին արժանացած Սյուզաննա Գրանթը («Էրին Բրոկովիչ» կինոֆիլմի սցենարիստը), իսկ հանձնախմբի անդամ է եղել հոլիվուդյան նշանավոր դերասանուհի Էվա Մարիա Սենթը:

Էրիֆ Նազարյանը եւ Էվա Մարիա Սենթը

«Ես չափազանց երախտապարտ եմ «Նիֆոլ» դատակազմին, Ակադեմիային, որը կինոարվեստի էվերեստն է, եւ հորս՝ Հայկ Նազարյանին, որն իմ 14-րդ տարեդարձին ինձ էր նվիրել իմ առաջին կինոսցենարը՝ Բադ Շուլբերգի «Ջրի ափին» գործը:

Խոնարհաբար ընդունում եմ այս մեծ պատիվը եւ պետք եղածը կանեմ՝ գրելով սցենարներ, որոնք, հուսով եմ, կբարունակեն համաշխարհային կինոյի իմ սիրելի սցենարիստների եւ բեմադրիչների ավանդույթները»:

32-ամյա Նազարյանը ծնվել է Հրազդան քաղաքում, ներգաղթած իրանահայերի ընտանիքում: Չորս տարեկանում տեղափոխվել է Մ.Նահանգներ: Ավարտել է Հարավային Կալիֆոռնիայի կինոյի եւ հեռատեսիլի դպրոցը: Նրա առաջին լիամետրաժ ժապավենը՝ բավականին փոքր բյուջեով նկարահանված «Կատույտ ժամը», առաջին անգամ ցուցադրվել է Սան Սեբաստիանի 55-րդ կինոփառատոնում (Իսպանիա) եւ շարունակում է շրջել աշխարհի տարբեր փառատոներում ու շահել նոր մրցանակներ:

Էրիֆ Նազարյանը էլեկտրոնային նամակով մեզ ներկայացրեց Ամերիկյան կինոակադեմիայի պարգեւին արժանացած իր նոր սցենարի բովանդակությունը: «Հսկաները» ընտանեկան դրամա է Մոնթիի մասին՝ երիտասարդ ուսանող, որը տառապում է Մարֆանի սինդրոմով: Դա հազվագյուտ վիճակ է, որը պատճառում է սրտի հիվանդություն եւ վերջույթների գերաճ: Երբ տղայի մոտ ախտորոշվում է կյանքին սպառնացող անեւրիզմ աորտայում, Մոնթին եւ նրա ամուսնալուծված ծնողները յոթ օրվա ընթացքում պետք է պատրաստվեն իրենց կյանքի մեծագույն մարտահրավերին: «Ես այս սցենարը գրել եմ նկատի ունենալով իմ եղբայր Դավիկին, որն ունի այդ խնդիրը: Նա չափազանց խիզախ մարդ է, մի քանի տարի առաջ ենթարկվեց սրտի ծանր վիրահատության: Դրանից օրեր ու գիշերներ առաջ Մոնթիի կերպարը սկսեց հայտնվել իմ մտքի աչքերում: Սկսեցի գրել Դավիկի մասին, եւ առաջին տեսարանի գաղափարները սկսեցին ի հայտ գալ: Ուզում էի, որ կերպարը լիներ երազող, որն օգտագործում է իր երազները՝ պայքարելու այն բաների դեմ, որոնք անզոր է փոխել իրական կյանքում: Իմ ներշնչանքը մարդկային սիրտն է՝ իր ողջ կենսաբանական ու խորհրդանշական նշանակությամբ: Երբ Մոնթիի սիրտը վտանգվում է, նրա ծնողները, որոնք յոթ տարի իրար հետ չեն խոսել, հանկարծ գիտակցում են, որ կանգնած են իրենց զավակին կորցնելու վտանգի առջեւ: Այդ վախը նրանց ուժանաբար մոտեցնում է հաշտության: Ես հավատում եմ հաշտությանն ու հույսին որպես երկու հիմնական թեմաներ, որ ճեղքում են սահմանները եւ միավորում մարդկանց: Գրելով «Հսկաները» հույս ունեի արժանին մատուցել եղբորս, որն աշխարհի իմ իմացած ամենաուժեղ մարդկանցից է, ու ներկայացնել պատմությունը մի ընտանիքի, որն ընդունում է փաստերը փոխելու իր անզորությունը: Այս սցենարով նաեւ հույս ունեմ մեծացնելու իրազեկությունը Մարֆանի սինդրոմի վերաբերյալ, մանավանդ որ, ըստ վերջին վիճակագրության, դրանով տառապում է յուրաքանչյուր հինգ հազար մարդուց մեկը»:

Իր հորից բացի (որը ժամանակին ուսանել էր Երեւանի մանկավարժական ինստիտուտում՝ Հենրիկ Մալյանի դասարանում) Էրիֆը կարոտով է հիշում նաեւ մեծ հորը. «Իմ լուսահոգի Հովհաննես պապիկը նույնպես մեծ ներշնչանք էր ինձ համար: Նա ինքնուս արձակագիր էր եւ ճշմարիտ գրող, որն ուներ աշխարհի ամենագեղեցիկ ձեռագիրը: Նա ինձ համար կարդում էր Հ. Թումանյանի պատմվածքները, Ա. Իսահակյանի բանաստեղծությունները: Իմ Թավուզ տատիկը մինչ օրս արտասանում է աշուղ Ջիվանու երգերը: Ես ներշնչված եմ ավելի շատ գրելու եւ նոր պատմություններ ստեղծելու Հայաստանի մասին 21-րդ դարում՝ համաշխարհայնացման դարաշրջանում: Հայ ժողովուրդն այնքան բան ունի պատմելու: Մենք պատմողների հին ցեղ ենք: Երբ ես Հայաստանում եմ, զգում եմ, որ Թումանյանի, Ռաֆֆու, Սարոյանի եւ հատկապես Եղիշե Չարենցի հոգիները սավառնում են օդում, ասես նրանք երբեք չեն հեռացել մեզանից: Նրանց խոսքերը հնչում են ինձ համար՝ ուր էլ որ գնամ: Մեր հին պատմությունը, մոտ անցյալը, գալիքը՝ այս բոլորը թեմաներ են, որ ես հետաքրքրված եմ պատմելու, պատմություններ, որոնք գործ ունեն մարդկային զգացմունքների եւ սրտի հետ:

Սիրով եւ կարոտով իմ բարի հայրենակիցներին՝

Էրիֆ Նազարյան»:

ՏԵՍԱՇԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Հայկական սփյուռքի մասին պատմող Ֆիլմաշարը կսկսվի Ֆրանսիայից

«Ի սփյուռս աշխարհի» («Աշխարհը եւ մենք») պայմանական անունը կրող խաղարկային փաստա-վավերագրական ֆիլմաշարի նախագծի հեղինակ, պրոդյուսեր, «Ման Փիչերս» ստուդիայի տնօրեն Մանվել Սարիբեկյանն ու ստեղծագործական խումբը նպատակ ունեն ստեղծելու «մի ինքնատիպ տեսահանրագիտարան աշխարհով մեկ սփռված հայկական սփյուռքի պատմության եւ ներկայի մասին»:

Առաջինը կնկարահանվի «Քրկության եւ արարման երգ» (Ֆրանսիա) ֆիլմը, որի սցենարի հեղինակն է գրող, գրականագետ Ալեքսանդր Թոփչյանը: Նրա խոսքով, ֆիլմը պետք է ունենա երկու հասցեատեր. «Չեմ կարծում, թե մեր նպատակը պետք է լինի ֆիլմ նկարահանել միայն Հայաստանի եւ սփյուռքահայության համար: Պետք է հասկանանք, որ յուրաքանչյուր գաղութ, ֆրանսիական, լատինաամերիկյան կամ մերձավորարեւելյան, բոլորը մաս են կազմում այդ երկրների հասարակությունների՝ քաղաքական, տնտեսական ու մշակութային առումներով: Որքան հիշում եմ, մենք միշտ սփյուռքին նայել ենք հիմնականում որպես Հայաստանից դուրս գտնվող հայկական աշխարհ, բայց արդի աշխարհի քաղաքական եւ մշակութային հարաբերությունները պահանջում են ամեն մի գաղութ դիտարկել այդ երկրի համատեքստում: Առանձնացնելը կնշանակի պարզապես աղքատացնել այդ երեւույթը: Ես լավ եմ ճանաչում ֆրանսիական գաղութը եւ եթե ամեն մի առանձին դեպքի թիկունքին չտեսնենք ֆրանսիական իրականությունը, չենք հասկանա բուն իրողությունը հենց հայկական համատեքստում: Դրանք շաղկապված են եւ պետք է դիտել միասնության մեջ: Շատ կարեւոր է, որ այս ֆիլմով կարողանանք լուրջ երկխոսություն սկսել յուրաքանչյուր երկրի արդի քաղաքական իրավիճակի հետ: Կարծում եմ, գլոբալ իմաստով, սա է այս ֆիլմի կարեւոր նպատակներից մեկը»:

Մանվել Սարիբեկյանը նույնպես համոզված է, որ ֆիլմաշարն առաջին հերթին հասցեագրված է աշխարհին. «Սփյուռքի յուրաքանչյուր գաղթօջախ ոչ միայն մեր ժողովրդի մի մասնիկն է օտար երկրում, այլեւ այդ երկրի անտրոհելի մի մասը: Սա նշանակում է, որ հայերին աղաստան տված յուրաքանչյուր երկրի համար կարեւոր է, թե տվյալ գաղութը ինչ տեղ է գրավում իրենց հասարակության մեջ, ինչ դերակատարում է ունեցել իրենց պատմության կարեւոր դրվագներում, ինչով է նպաստում այսօր այդ երկրի զարգացմանը: Այս ֆիլմաշարը հնարավորություն կտա, որ աշխարհասփյուռ հայ համայնքները ճանաչեն միմյանց: Սփյուռքի համապարփակ ուսումնասիրությունն առ այսօր չի եղել: Փաստորեն, առաջին անգամն է, որ այն պիտի ներկայացվի ամբողջապես, ժամանակի եւ տարածության առումով առավել ընդարձակ, բազմակողմանի, իր բոլոր բնագավառներով ու դրսեւորումներով»:

Կոմիտասի արձանը Փարիզում, քանդակագործ՝ Դավիթ Երեւանցի

Այս նախագիծը նրան առիթ է տվել լինելու Փարիզի եւ Մարսելի հայկական կազմակերպությունների արխիվում, որտեղ պահվում են եզակի փաստաթղթեր, լուսանկարներ, նյութեր: «Այնտեղ ծնվեցին նոր մտահղացումներ՝ ստեղծելու ֆիլմաշարեր սփյուռքի մտավորականների, բարերարների, ինչպես նաեւ ազգային-ազատագրական պայքարի հերոսների մասին», ասում է Սարիբեկյանը:

Ֆիլմի նախագիծը մեծ հետաքրքրություն է առաջացրել սփյուռքի ու Հայաստանի մի շարք կազմակերպությունների եւ անհատների շրջանում, որոնք, ինչպես նաեւ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, պատրաստակամություն են հայտնել մասնակցելու եւ աջակցելու ֆիլմաշարի ստեղծմանը: Այն կիրականացվի մասնակցությամբ Հայաստանի մշակույթի նախարարության, ազգային կինոկենտրոնի, ֆրանսիական ու տեղական մի շարք կազմակերպությունների հետ համատեղ: Ստեղծագործական ու խորհրդատվական խմբում ընդգրկված են ճանաչված մասնագետներ, որոնց թիվը հետագայում կավելանա:

Այժմ ակնկալում են մոտակա օրերին վերջնական պատասխան ստանալ պետական աջակցության մասնաբաժնի եւ ձեւաչափի մասին, որպեսզի մնացած ծախսերը կարողանան հոգալ հովանավորների եւ մասնակիցների օգնությամբ:

Հավատանք, որ նրանց ակնկալիքները կիրականան ամբողջապես:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

«Ծառերը»՝ լավագույն վավերագրական ֆիլմ Տորոնտոյի փառատոնում

Հայկական ծառատնկման ծրագրի շրջանակներում նկարահանված լուսանջելեսցի ռեժիսոր Քենեդի Ուիթլիի «Կյանք պարգեւող ծառեր» ֆիլմը Տորոնտոյում անցկացվող «Պոմգրենիս» 3-րդ փառատոնում արժանացել է լավագույն կարճամետրաժ վավերագրական ֆիլմի մրցանակին: Բացի 20 րոպե տեւողությամբ այդ ֆիլմից, փառատոնում ներկայացվել են 30 այլ ֆիլմեր, որոնց թվում՝ Ռոբերտ Քեշիշյանի «Այրվող Հռոմը» եւ Նուրիցա Մաթոյանի «Հրանտ Դինք: Երկու ազգությունների սիրտը» ֆիլմերը:

«Ֆիլմն իսկական սիրո ու նվիրումի աշխատանք էր: Ես հպարտ եմ, որ Քարոլին Մուգարն ինձ առաջարկեց այն նկարահանել: Դա հոյակապ ծրագիր է եւ կարող է օրինակ ծառայել ուրիշ երկրների համար», ասել է ֆիլմի ռեժիսորը, ավելացնելով, որ հայերն այնչափ բարյացակամ էին ստեղծագործական խմբի հանդեպ: «Նրանք իրենց տներն ու սրտերը բացեցին մեր առաջ», նշել է նա:

«Ծրագրի մասնակիցների անունից երախտագիտություն եմ հայտնում փառատոնի կազմակերպիչներին եւ Տորոնտոյի հայկական համայնքին՝ մեր նախաձեռնություններին շարունակաբար աջակցելու համար», մրցանակը հանձնելուց հետո ասել է ծրագրի պատասխանատու Պոլ Եղիայանը: Ֆիլմում հնչող տեքստը կարդում է Դավիթ Դալլաքյանը, որը Հայաստանի Այգուտ գյուղից է:

Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ

Ֆրանսիական կիրթ

«Այգաբացի սահմանը» ֆիլմ է պատկերների կախարդանքի մասին, պատկերների ճշմարտության ու կեղծիքի, պատկերների ձգողականության ու կործանարար ուժի: Պատկերը՝ բառի բողբոջյան իմաստով, **«պատկերը՝ /այդ/ մեծ, /այդ/ միակ, /այդ/ նախասեղծ կիրքը»**, պատկերը՝ որպես իրականության ցանկացած կերպավորում:

Եվ ախորը մեր:

Ֆիլիպ Գարրելը ինքնակամ բանակիչն է պատկերների այդ «ախորի»: Նրա առաջին աշխատանքները՝ «Ներքին վերը», «Ակունքների կապույտը», «Եվ հրեշտակն է անցնում», որոնք կինոքննադատները որեւէ ուրիշ սահմանում չգտնելով, կոչում են «էքսպերիմենտալ», ոչ այլ ինչ են, քան խորտակումներ պատկերի հատակը, որ գրկում են կերպավորման ներքին, հրկիզվող սահմանը, ձերբազատում պատկերը իր արտաքնայնությունից: Մաքրազերծել պատկերների ներքին բարքառը, եւ պատկերները կշարունակվեն մաքուր ու թաց, եւ կվերստեղծեն հայացքը մեր: «Պատկերների բանաստեղծ». սա այն բացառիկ դեպքերից է, երբ նման բարձրագոչ եւ ընդհանրական ձեւակերպումը դառնում է ընդամենը փաստի ճշգրիտ եւ պարզ արձանագրում: Այս երկու բեւեռների միջեւ ծայր է առնում Ֆիլիպ Գարրելի արվեստի բեկուն լարումը: Որովհետեւ պատկերների այս հպատակը, ավելի քան մեկ ուրիշը իր ժամանակակիցներից, ռեժիսորն է նաեւ պատկերների խաբկանքի եւ անելանելիության:

«Այգաբացի սահմանի» հենքում Թեոֆիլ Գոթյեի՝ «Ուրվականը» ֆանտաստիկ վիպակն է: Գլխավոր հերոստին մահվանից հետո ժամանակ առ ժամանակ իր նախկին կերպարանքով այցելում է իր սիրեցյալին: Ֆիլիպ Գարրելն իր ֆիլմում պահպանում է միայն Գոթյեի վիպակի առանցքային գիծը. ուրվականի հայտնությունները, եւ այդ պատկերի բացարձակ կախարդանքը, որի գերին է գլխավոր հերոսը: Ֆիլմում Ֆրանսուան (Լուի Գարրել՝ Ֆիլիպ Գարրելի որդին) լուսանկարիչ է, որին հանձնարարված է ախատել հռչակավոր կինոասող Կարոլ Վայսմանի հետ: Կարոլին մարմնավորում է ֆրանսիական ժամանակակից կինոյի նորահայտ ու խոստումնալից աստղերից մեկը՝ Զոննի Հոլիդեյի դուստր Լորա Սմեսը: Նրանց ծանոթությունը առաջին իսկ օրից վեր է ածվում սիրավեպի: Կարոլը երերուն հավասարակշռությունների ու չդադարող ընդվզման կերպար է եւ ողբերգականորեն՝ կրողը իր չափազանց ուժի, որ խենթության եզրերն է շոշափում: Կարոլի մահվանից հետո Ֆրանսուան փորձում է ազատվել պատկերի զառանցագին կախարդանքից, բայց թե՛ նոր սերը, թե՛ «իսկական» կյանքի կառուցելու հեռանկարը անզոր են միշտ նույն եւ վերաստեղծ խենթության առջեւ: Անվերադարձ է պատկերների հպատակությունը: Գրկել պատկերը՝ սահմանից անդին: Ճեղքել լույսի թաղանթը, որպալ պատկերը պատկերից այնկողմ:

Հերոսների մահը, Կարոլի վերադարձը՝ որպես պատկեր (ուրվական), ըստ էության, երկրորդական բնույթ են կրում: Կարոլի փոխակերպումը սվերի՝ իրականում տեղի է ունենում առաջին իսկ պլանում: Ֆրանսուան, լուսանկարչական խցիկը ձեռին, փորձում է որսալ Կարոլի պատկերը փարիզյան ամառան թափանցիկ օդի ֆոնի վրա. Կարոլն արդեն իսկ սվերաձին էակ է: Լուսանկարչական ապարատի այս «միստիկ» իշխանությունը պարբերաբար հայտնվում է ֆիլմի ամենատարբեր դրվագներին:

Լուսանկարչական խցիկը համառորեն կորզում է կյանքի ակնթարթները կենդանի էակից՝ փոխակերպելով դրանք պատկերի: Մենք գտնվում ենք սվերների թագավորությունում: Ֆիլմի առանցքային տեսարանները, ինչպես օրինակ, Ֆրանսուայի «ուղեւորությունը»՝ դժոխքի դռներից Կարոլի մարմինը աղերսելու (ինչպես Գարրելի բոլոր ֆիլմերում, այստեղ նույնպես առկա է Օրֆեոսի եւ Եվրիդիկեի առասպելահենքը), առանց առանձնահատուկ տեսողական հնարքների, անբացատրելիորեն ցնորական են, սվերոց: Ուշագրավ է այս առումով սեւ-սպիտակի ուրույն օգտագործումը. առանձնահատուկ թրթիռ եւ խտություն ստանալով Գարրելի ֆիլմերում՝ սեւ-սպիտակը ոչ միայն կառոտաբաղձ վերադարձ է կինոարվեստի ակունքներին: Ֆիլմը դիտելիս չենք կարող ակամա չհիշել 20-ական թվականների այն մի քանի արվեստագետների՝ Աբել Գանս, Լուի Դելյուկ, Մարսել Էբյե, երիտասարդ խանդավառ փորձերը, որոնց համախմբողը «մաքուր կինոյի» գաղափարն էր: Ֆիլմը դառնում է ուրույն մի վկայություն կինոյի անկրկնելի ճշմարտության մասին: Ի՞նչ է կինոն, եթե ոչ լույսի ու մութի ստվերային այն պարը, որ շարժում է դառնում մեր հայացքների առջեւ: «Կինոն մեռյալների արվեստ է», ասում է Ժան-Լյուկ Գոդարը «Կինոյի պատմություններում», ինչպես երկարող, աննահանջ այն ստվերները, որոնք միանգամայն ինքնուրույն մարմին: Ֆիլմի յուրաքանչյուր տեսարան մարում ու ծագում է խավարի մեջ բացվող լույսի շրջանակում. այսինքն՝ կրկին ու կրկին ստվերներից կորզված լուսանկարներ, որ զատված են կյանքի տարածությունից: Սիրո առաջին տեսարաններից մեկում, երբ առաջին անգամ արծարծվելու է ժամանակի, տեւողության խնդիրը: Ֆրանսուայի հայացքը լցում է Կարոլին, դառնում դեպի նրա լուսանկարը՝ պատին, որ արձանագրում է իրենց հանդիպման առաջին օրը. Կարոլը ամռան կուրացուցիչ ճերմակի մեջ: Պարբերաբար հերոսների պատկերին ֆիլմում նախորդում է նրանց արտացոլքը՝ հայելու կամ ապակյա դռան փեղկի մեջ, մինչ Կարոլն ու Ֆրանսուան վերջնականապես բնակություն կհաստատեն սահմանից այնկողմ՝ հայելիների ետեւում: Կարծես ներքին, համրացած մի հիշողությամբ «Այգաբացի սահմանը» շարունակում է «Նա այնքան ժամեր է անցկացրել լուսարձակների տակ» ֆիլմի վերնագիրը. «Եվ բոլոր այն ժամերը, երբ ես «պատկեր» եմ երազել քեզ», ասում է կարծես ֆիլմի գաղտնատեքստը. խոստովանություն, որն արծարծում է ոչ միայն ռեժիսորի ապրած ողջ ուղին, այլեւ պատկերների այդ արվեստի՝ կինոյի, բազմաբարդ փոխհարաբերության խնդիրը իրականության հետ:

«Մենք քնած ժողովուրդ ենք, Կարո՛լ, եւ քնած ժողովուրդը չէ, որ պատմություն է սարքում, այնպես որ դու կարող ես քնել, Կարո՛լ»: Ֆիլիպ Գարրելի ֆիլմը ծայրից ծայր պատկերների այս «քունն» է՝ խոշոր պլանների բացարձակ «պատկերակերտ» գեղեցկությամբ, սեւ-սպիտակի թրթռուն հեւքով, պատկերի լռությամբ ու բարբառով:

Ֆիլիպ Գարրել

Քուն, բայց եւ չդադարող մի արթնություն: Չնայած այս հոսուն, ինքնահեղ բանաստեղծականությանը՝ Ֆիլիպ Գարրելի հայացքը միեւնույն ժամանակ արտաքին է, շիտակ, անողոք: Ի տարբերություն իր նախորդ՝ «Օրինական սիրահարները» ֆիլմի լուսավոր հեգնանքին՝ հեգնանքն այստեղ գրեթե բացակա է՝ տեղի տալով առավել արտաքին ու չոր այն հայացքին, որը լուսանկարչական խցիկի սառն թարթյունով արձանագրում է պատկերների այդ խրախճանքի սլացքը դեպի ասֆալտ: Կարծես երկրորդ մի հայացք դրսից դիտում է այդ ընթացքը այն նույն պահին, երբ մյուս՝ ներքին հայացքն ավելի ու ավելի խորտակվում է լույսի ու ստվերների այն իջվածքներում, որոնք կոչվում են պատկեր: Կարելի է անշուշտ նկատել, որ պատկերների նման անողոք պատկազերծումը միայն Ֆիլիպ Գարրելի մենաշնորհը չէ: Նոր Ալիքը եւ առանձնապես Ժան-Լյուկ Գոդարը, սկսած «Արհամարհանք» ֆիլմից, ամենայն խորությամբ 60-ականներին առաջ են քաշել պատկերի, նրա ճշմարտության ու կեղծիքի խնդիրը՝ գերմանական նախառոմանտիզմի նմանությամբ, ստեղծելով կատարյալ, ինքնահայեցող արվեստի գործի կաղապարը՝ «Ֆիլմ ֆիլմի մասին», դրանց միահյուսումը միակ ու հզոր մի տրփյունի մեջ: Այս երկու հայացքները, որ մշտապես կոչված են հավասարակշռելու իրար Ֆիլիպ Գարրելի ֆիլմերում, թերեւս իրենց ամենահստակ եւ ուժեղ արտահայտությունն են ստանում այս վերջին աշխատանքում: Ֆիլմի վերջին պատկերը կտրուկ է, չոր, անվերջաբան. Ֆրանսուայի մարմինը՝ ասֆալտին, այն նույն կուրացուցիչ ճերմակի մեջ, որով սկսվում է ֆիլմը:

Բայց եւ հետաքրքիր է ֆիլմում տարբերել բոլոր այն տարրերը, որոնք Ֆիլիպ Գարրելի ստեղծագործության անխախտ հենքն են. երկու բեւեռների առկայությունը՝ Գեղեցիկը եւ բացարձակ ինքնակործանման կիրքը, որ իրար են բախվում կնոջ կերպարում. առանձնապես դժվար չէ վերծանել այստեղ 70-ականների ամենաառեղծվածային եւ աղմկահարույց կերպարներից մեկի՝ մանիկենտի, ռոք երգչուհի, դերասանուհի Նիկոյի՝ Գարրելի կնոջ ուղվագիծը: Ինքնասպանության սեւեռուն գաղափարը, որ երազած ուղեծրի նման անցնում է Գարրելի բոլոր ֆիլմերով, նույնպես հղում է «սարգեսնյա ու թավշյա» Նիկոյի դիմագծին: Պատկե՞ր: Եւ մի պատկեր, որի բեկումն իր լուսավոր առանցքի մեջ է շրջադարձում արվեստագետի ողջ ստեղծագործական ուղին: Մենք թագադիր ենք ու գերված պատկերներով:

Հանդիսատեսն ինքը երկու ժամ

Կադր «Այգաբացի սահմանը» ֆիլմից



Կադր «Այգաբացի սահմանը» ֆիլմից

Ֆիլիպ Գարրել. «Այգաբացի սահմանը»

ՇՈՒՇԱՆԻԿ ԹԱՄՐԱԶՅԱՆ
Ֆրանսիա, Լիոն

Կաննի 61-րդ կինոփառատոնի կատարած ամենաչկանխատեսված ընտրություններից մեկը Ֆիլիպ Գարրելի «Այգաբացի սահմանը» ֆիլմն էր. ռեժիսոր, որ հայ կինոդիտողին ներկայացավ ամառանը «Օրինական սիրահարները» ֆիլմով՝«Ոսկե ծիրան» 5-րդ միջազգային կինոփառատոնում: Ոչ պակաս «հիշարժան» էր դառնալու ֆիլմի ճակատագիրը՝ Կաննի ցուցադրության ժամանակ: Ֆիլմի ավարտից 20 րոպե առաջ դահլիճում միջազգային մամուլի եւ հեռուստատեսության ներկայացուցիչների շարքերից ծիծաղ ու սուլոցներ են լսվում, որ անմիջապես իրենց արձագանքն են գտնում մամուլում՝ որպես Կաննի ախորժելի սկանդալային զարէջերից մեկը: Այս հանգամանքը հետաքրքրական է թե՛ ինքնին՝ որպես ժամանակակից կինոլրագրության զարգացման անշրջելի ընթացքն արձանագրող փաստ, թե՛ որպես Գարրելի ստեղծագործության անուղղելի բացառիկության ապացույց:

Հերոսների մահը, Կարոլի վերադարձը՝ որպես պատկեր (ուրվական), ըստ էության, երկրորդական բնույթ են կրում: Կարոլի փոխակերպումը սվերի՝ իրականում տեղի է ունենում առաջին իսկ պլանում: Ֆրանսուան, լուսանկարչական խցիկը ձեռին, փորձում է որսալ Կարոլի պատկերը փարիզյան ամառան թափանցիկ օդի ֆոնի վրա. Կարոլն արդեն իսկ սվերաձին էակ է: Լուսանկարչական ապարատի այս «միստիկ» իշխանությունը պարբերաբար հայտնվում է ֆիլմի ամենատարբեր դրվագներին:

Լուսանկարչական խցիկը համառորեն կորզում է կյանքի ակնթարթները կենդանի էակից՝ փոխակերպելով դրանք պատկերի: Մենք գտնվում ենք սվերների թագավորությունում: Ֆիլմի առանցքային տեսարանները, ինչպես օրինակ, Ֆրանսուայի «ուղեւորությունը»՝ դժոխքի դռներից Կարոլի մարմինը աղերսելու (ինչպես Գարրելի բոլոր ֆիլմերում, այստեղ նույնպես առկա է Օրֆեոսի եւ Եվրիդիկեի առասպելահենքը), առանց առանձնահատուկ տեսողական հնարքների, անբացատրելիորեն ցնորական են, սվերոց: Ուշագրավ է այս առումով սեւ-սպիտակի ուրույն օգտագործումը. առանձնահատուկ թրթիռ եւ խտություն ստանալով Գարրելի ֆիլմերում՝ սեւ-սպիտակը ոչ միայն կառոտաբաղձ վերադարձ է կինոարվեստի ակունքներին: Ֆիլմը դիտելիս չենք կարող ակամա չհիշել 20-ական թվականների այն մի քանի արվեստագետների՝ Աբել Գանս, Լուի Դելյուկ, Մարսել Էբյե, երիտասարդ խանդավառ փորձերը, որոնց համախմբողը «մաքուր կինոյի» գաղափարն էր: Ֆիլմը դառնում է ուրույն մի վկայություն կինոյի անկրկնելի ճշմարտության մասին: Ի՞նչ է կինոն, եթե ոչ լույսի ու մութի ստվերային այն պարը, որ շարժում է դառնում մեր հայացքների առջեւ: «Կինոն մեռյալների արվեստ է», ասում է Ժան-Լյուկ Գոդարը «Կինոյի պատմություններում», ինչպես երկարող, աննահանջ այն ստվերները, որոնք միանգամայն ինքնուրույն մարմին: Ֆիլմի յուրաքանչյուր տեսարան մարում ու ծագում է խավարի մեջ բացվող լույսի շրջանակում. այսինքն՝ կրկին ու կրկին ստվերներից կորզված լուսանկարներ, որ զատված են կյանքի տարածությունից: Սիրո առաջին տեսարաններից մեկում, երբ առաջին անգամ արծարծվելու է ժամանակի, տեւողության խնդիրը: Ֆրանսուայի հայացքը լցում է Կարոլին, դառնում դեպի նրա լուսանկարը՝ պատին, որ արձանագրում է իրենց հանդիպման առաջին օրը. Կարոլը ամռան կուրացուցիչ ճերմակի մեջ: Պարբերաբար հերոսների պատկերին ֆիլմում նախորդում է նրանց արտացոլքը՝ հայելու կամ ապակյա դռան փեղկի մեջ, մինչ Կարոլն ու Ֆրանսուան վերջնականապես բնակություն կհաստատեն սահմանից այնկողմ՝ հայելիների ետեւում: Կարծես ներքին, համրացած մի հիշողությամբ «Այգաբացի սահմանը» շարունակում է «Նա այնքան ժամեր է անցկացրել լուսարձակների տակ» ֆիլմի վերնագիրը. «Եվ բոլոր այն ժամերը, երբ ես «պատկեր» եմ երազել քեզ», ասում է կարծես ֆիլմի գաղտնատեքստը. խոստովանություն, որն արծարծում է ոչ միայն ռեժիսորի ապրած ողջ ուղին, այլեւ պատկերների այդ արվեստի՝ կինոյի, բազմաբարդ փոխհարաբերության խնդիրը իրականության հետ:

«Մենք քնած ժողովուրդ ենք, Կարո՛լ, եւ քնած ժողովուրդը չէ, որ պատմություն է սարքում, այնպես որ դու կարող ես քնել, Կարո՛լ»: Ֆիլիպ Գարրելի ֆիլմը ծայրից ծայր պատկերների այս «քունն» է՝ խոշոր պլանների բացարձակ «պատկերակերտ» գեղեցկությամբ, սեւ-սպիտակի թրթռուն հեւքով, պատկերի լռությամբ ու բարբառով:

Քուն, բայց եւ չդադարող մի արթնություն: Չնայած այս հոսուն, ինքնահեղ բանաստեղծականությանը՝ Ֆիլիպ Գարրելի հայացքը միեւնույն ժամանակ արտաքին է, շիտակ, անողոք: Ի տարբերություն իր նախորդ՝ «Օրինական սիրահարները» ֆիլմի լուսավոր հեգնանքին՝ հեգնանքն այստեղ գրեթե բացակա է՝ տեղի տալով առավել արտաքին ու չոր այն հայացքին, որը լուսանկարչական խցիկի սառն թարթյունով արձանագրում է պատկերների այդ խրախճանքի սլացքը դեպի ասֆալտ: Կարծես երկրորդ մի հայացք դրսից դիտում է այդ ընթացքը այն նույն պահին, երբ մյուս՝ ներքին հայացքն ավելի ու ավելի խորտակվում է լույսի ու ստվերների այն իջվածքներում, որոնք կոչվում են պատկեր: Կարելի է անշուշտ նկատել, որ պատկերների նման անողոք պատկազերծումը միայն Ֆիլիպ Գարրելի մենաշնորհը չէ: Նոր Ալիքը եւ առանձնապես Ժան-Լյուկ Գոդարը, սկսած «Արհամարհանք» ֆիլմից, ամենայն խորությամբ 60-ականներին առաջ են քաշել պատկերի, նրա ճշմարտության ու կեղծիքի խնդիրը՝ գերմանական նախառոմանտիզմի նմանությամբ, ստեղծելով կատարյալ, ինքնահայեցող արվեստի գործի կաղապարը՝ «Ֆիլմ ֆիլմի մասին», դրանց միահյուսումը միակ ու հզոր մի տրփյունի մեջ: Այս երկու հայացքները, որ մշտապես կոչված են հավասարակշռելու իրար Ֆիլիպ Գարրելի ֆիլմերում, թերեւս իրենց ամենահստակ եւ ուժեղ արտահայտությունն են ստանում այս վերջին աշխատանքում: Ֆիլմի վերջին պատկերը կտրուկ է, չոր, անվերջաբան. Ֆրանսուայի մարմինը՝ ասֆալտին, այն նույն կուրացուցիչ ճերմակի մեջ, որով սկսվում է ֆիլմը:

Բայց եւ հետաքրքիր է ֆիլմում տարբերել բոլոր այն տարրերը, որոնք Ֆիլիպ Գարրելի ստեղծագործության անխախտ հենքն են. երկու բեւեռների առկայությունը՝ Գեղեցիկը եւ բացարձակ ինքնակործանման կիրքը, որ իրար են բախվում կնոջ կերպարում. առանձնապես դժվար չէ վերծանել այստեղ 70-ականների ամենաառեղծվածային եւ աղմկահարույց կերպարներից մեկի՝ մանիկենտի, ռոք երգչուհի, դերասանուհի Նիկոյի՝ Գարրելի կնոջ ուղվագիծը: Ինքնասպանության սեւեռուն գաղափարը, որ երազած ուղեծրի նման անցնում է Գարրելի բոլոր ֆիլմերով, նույնպես հղում է «սարգեսնյա ու թավշյա» Նիկոյի դիմագծին: Պատկե՞ր: Եւ մի պատկեր, որի բեկումն իր լուսավոր առանցքի մեջ է շրջադարձում արվեստագետի ողջ ստեղծագործական ուղին: Մենք թագադիր ենք ու գերված պատկերներով:

Հանդիսատեսն ինքը երկու ժամ

Ուժեղ մկանների եւ նուրբ հոգու համադրություն

Ժան Կլոդ Վան Դամը՝ մարտաստեղծ դերասանն ու հերոսը, որն իր փառքի օրերին հայտնի էր բյուսելցի մկան անունով, հեռախոսազրույցի ընթացքում մահաբեր եւ ընկճված էր: Նա հետաձգել էր իր ուղեւորությունը Նյու Յորք՝ բաց թողնելով բազմաթիվ հանդիպումներ: Դերասանը մնացել էր Բանգկոկում, ուր վերջերս էր նկարահանվել ֆիլմում: Հեռախոսազրույցի ժամանակ նա նշեց, որ այդտեղ մնալու լուրջ պատճառներ ունի: «Այստեղ 7 շուն եմ ընտելացրել, որոնցից մեկը սրտի արատ ունի: Ամեն գիշեր հիվանդանոցում եմ: Եթե ուշադրություն չդարձնեմ այդ շանը, լուրջ խնդիրներ կառաջանան: Շատ զգայուն կենդանի է», ասաց Վան Դամը: Մնացած շները՝ բոլորն էլ անտուն եւ թափառաշրջիկ, արդեն ուղարկվել են Բելգիայում գտնվող դերասանի տուն: Հաշմված կենդանիների համար նա նույնիսկ անվասայլակ է պատվիրել:

Գուցե եւ անսովոր թվա, որ մարտաֆիլմերի վետերան եւ դիմուկ հարվածների վիրտուոզ Վան Դամն օժտված է մարդկային թուլություններով: Իրականում այս հանգամանքը դերասանի նոր կերպարի հետ կատարելապես համատեղելի է իր վերջին «JCVD» ֆիլմում: Ֆրանսիացի ռեժիսոր Մաբրուք էլ Մեհրիի ֆիլմում Վան Դամը կարողացել է իր կերպարին հաղորդել նոր հատկանիշներ՝ հաճախ խաղալով ինքն իրեն: Ծիծաղաշարժ, բայց եւ թախծոտ տրամադրությամբ համակող ֆիլմի աստղ Վան Դամը, որն իր 48-րդ տարին բոլորել է նախորդ ամիս եւ ում վերջին ֆիլմը Մ. Նահանգներում համարվում է 1998-ի թիվ մեկ ձախողումը, միջին տարիքի կինոաստղ է:

«JCVD» ֆիլմի գովազդի շնորհիվ Վան Դամը շատ ավելի ուշադրության արժանացավ, քան վերջին մի քանի տարիներին: Վերջին անգամ հասարակության գիտակցության վրա ազդելու նրա փորձը 1996-ին էր, երբ հայտնվեց «Ընկերներ» ֆիլմում ու խաղաց ինքն իրեն:



Կադր «JCVD» ֆիլմից

«JCVD»-ն հիթ էր Կաննում, իսկ Հյուսիսային Ամերիկայում ֆիլմի պրեմիերան կայացավ Տորոնտոյի միջազգային կինոփառատոնում: Ֆիլմի ստեղծման պատմությունը ծանոթ է դասական կանոններով, Վան Դամի կարիերայի նմանությամբ՝ լի անկումներով ու վերելքներով: Նա վնասվածք ստացավ, երբ փորձում էր տրավորություն գործել իսրայելական կինոյի ինքնակալ Մենահեմ Գոլանի վրա ֆիբոխինգի ցուցադրությամբ: Նրա վաղ ֆիլմերն էժանագին էին, հաճախ նկարահանված ասիական էկզոտիկ վայրերում:

1990-ականներին Վան Դամն ավարտել է կինոստուդիան եւ աշխատել է Հոլիվուդում առաջին խաղերն անող երիտասարդ վտարանդիների հետ: Նրա անձնական կյանքը եւս հարթ չի ընթացել. բազմաթիվ ամուսնալուծություններ (ամուսնացել է 5 անգամ), կախվածություն կոկայինից եւ ձերբակալություն մեքենան հարբած վարելու համար:

«JCVD» ֆիլմը ստիպեց Վան Դամին հասկանալ մարտաֆիլմի հերոս լինելու ողջ անհեթեթությունը: «Ես դեռեւս մարզվում եմ ամեն օր», խոստովանեց դերասանը, «Չեմ կարծում, որ իմ տարիքի կամ նույնիսկ 20-ամյա դերասանը ֆիզիկապես ի վիճակի է անել այն, ինչ ես եմ անում»: Բայց եւ ավելացրեց. «48 տարեկան եմ, եւ սանդուղքից թռչելով օդում 3 անգամ գլուխկոնձի տալն այլեւս հավաստի չի թվում»: Այդտեղից, սխալ կլինի ասելը, թե «JCVD» ֆիլմում անուշադրության է մատնվում այն բոնությունը, որից առաջացել է «Վան Վնասող» հայտնի արտահայտությունը:

Կինոնկարը սկսվում է մի տեսարանով՝ նկարահանված ֆիլմը ֆիլմում ձեւաչափով, համալրված զենքի կրակոցներով, դանակի հարվածներով եւ նռնակի պայթյունով: Այս ամենը նկարված է մեկ դուբլով եւ ակնհայտորեն աստղին ներկայացնում է իր ողջ հնարավորություններով:

Վան Դամի զգայուն կերպարը բացահայտվում է 6 ռոպեանոց մենախոսությամբ, որն ավելի հուզիչ է, քան նրա բոլոր դերերը միասին վերցրած: Աչքերը լի են արցունքներով, ձայնը՝ երերուն է: Խոսում է իր երազանքների եւ ձախողումների մասին. «Ես հավատում եմ, որ դա պարզապես ֆիլմ չէր»: Այդ տեսարանը ավելացվել է նկարահանումների նախօրյակին: Վան Դամը Մեհրիին ասել է, որ ֆիլմում բացակայում է անկեղծությունն ու անմիջականությունը: Էլ Մեհրին առաջարկել է ավելացնել մենախոսության տեսարանը: Վան Դամը հետո պատմում էր, որ մենախոսությունն արտասանելիս իրեն ամբողջովին մերկացված էր զգում: Երբ առաջին անգամ դիտել է այդ տեսարանը, մտածել է. «Ես չէի խաբում», եւ ավելացրել է. «Ինձ համար անսովոր էր ֆրանսերեն խոսելը»: Ֆրանսերենը նրա մայրենի լեզուն է, բայց սա նրա առաջին գլխավոր դերն է ֆրանսերենով:

Տարօրինակ շեղումներով եւ բանաստեղծական գրավչությամբ լի մենախոսությունը նման է դերասանի իրական խոսելաձեւին: «Ես ծարավ էի փառքի, սիրո, բայց փառքը եկավ ու պարզվեց, որ այն գոյություն չունի», ասում է նա:

Իր հաջորդ ֆիլմում Վան Դամը հանդես է գալու որպես դերասան, սցենարիստ, ռեժիսոր եւ պրոդյուսեր: Նա նշել է, որ այն պատմելու է 1960-ականների Լուիզիանայի եւ ներկայիս Հարավարեւելյան Ասիայի մասին եւ ունենալու է «վիճելի հաղորդագրություն»: Առաջիկայում նպատակ ունի ներկայանալու ոչ թե որպես մարտաֆիլմերի աստղ, այլ խարակտերային հերոս: Համոզված է, որ ճիշտ ուղու վրա է: «Դժվար է վաստ ֆիլմ նկարահանել «JCVD»-ից հետո», ասել է նա:

Վան Դամը կարեւորում է նաեւ կայունությունը անձնական կյանքում: Նա կրկին ամրում է իր երկրորդ կնոջ եւ երեխաների հետ: «Ես ուզում եմ, որպեսզի մարդիկ վստահ լինեն, որ ես փոխվել եմ եւ լի եմ պատասխանատվության զգացումով»:

Ըստ «Նյու Յորք Թայմսի» պատրաստեց
ԱՐԵՎԻԿ ԲԱԳՈՒՅԻՆԸ

Աթաթուրքը ոչ որպես կուռք, այլ սովորական անձնավորություն

«Մուսթաֆա» խորագրով երկու ժամ տեւողությամբ վավերագրական ֆիլմը հոկտեմբերի վերջին Թուրքիայի Հանրապետության հռչակման 85-րդ եւ նրա հիմնադիր՝ Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի մահվան 70-ամյակի կապակցությամբ երկրում ցուցադրվելուց հետո հակասական մեկնաբանությունների տեղիք է տվել:

«Վաթան» թերթի սյունակագիր Յիգիթ Բուլութը ֆիլմը որակել է «արտառոց», նշելով, որ դա «ժողովրդի աչքին Աթաթուրքին նսեմացնելու ջանքերին նպաստող վերջին փորձն է»: «Մի՛ դիտեք այդ վավերագրական ֆիլմը, արգելե՛ք մարդկանց դիտել եւ ամենակարեւորը՝ մի՛ թույլատրեք, որ երեխաները դիտեն, որպեսզի Աթաթուրքին նսեմացնող սերմերը չներթափանցեն նրանց ենթագիտակցության մեջ», գրել է նա:

Մեկ այլ թերթ նշել է, որ 1 մլն եվրո բյուջեով նկարահանված ֆիլմը ցուցադրման առաջին հինգ օրերի ընթացքում արդեն իսկ կես մլն հանդիսատես է բերել կինոդահլիճներ եւ «ամբողջովին իջեցրել է Աթաթուրքին իր հեղինակավոր պատվանդանից»: Իսկ Քեմալիստները, որոնք կուռքի են վերածել եւ անհատի պաշտամունքի առարկա դարձրել Աթաթուրքին, եւ իրենց համարում են նրա ժառանգության անբեռնախնդիր պահապանները, գտնում են, որ ֆիլմը անպատվում է Թուրքիայի ազգային հերոսին:

Կադր «Մուսթաֆա» ֆիլմից

Այլ ազգայնականներ քննադատում են ֆիլմի ռեժիսոր, լրագրող Չան Դունդարին այն բանի համար, որ Աթաթուրքի պատանեկությունը մարմնավորող երեխան ազգությամբ հույն է եւ ոչ թե թուրք: Ինչպես հայտնի է, Աթաթուրքը ծնվել է Թեսալոնիկեում (Սալոնիկ, Հունաստան), հենց այդ պատճառով Դունդարը ֆիլմի հունական էպիզոդների նկարահանման ժամանակ ներգրավել է տեղացիներին: Ավելին՝ Թուրքիայի գլխավոր բջջային պրովայդեր «Թուրքսելը» դադարեցրել է ֆիլմի հովանավորությունը՝ դժգոհությունների պատճառով բաժանորդներին չկորցնելու համար: Սակայն նոր սերնդի ներկայացուցիչներից 22-ամյա Գորկեմ Դագչին դրական է գնահատել Աթաթուրքի կերպարը ֆիլմում: «Հետաքրքրական էր իմանալ, որ նա մեզ նման սովորական մարդ էր եւ ուներ իր թերությունները»: Խնդիրն այն է, որ ռեժիսորը Աթաթուրքին պատկերել է որպես կնամոլ, խմող ու ծխող անձնավորություն, ինչը, ավելացնենք մեր կողմից, ամբողջովին ճիշտ է:

«Աթաթուրքը այն սոսինձն է, որը միավորված է պահում թուրք ժողովրդին: Նա թուրքերի առաջնորդն է, ազգային տիպարը», գրել են համալսարանական պրոֆեսորներ՝ Ահմետ Երջանն ու Օրհան Քուրալը, որոնք Սամբուլում ռեժիսորի դեմ դատական հայց են ներկայացրել «Աթաթուրքին անարգելու» համար:

Ըստ «Ռոյթերի», «Մուստաֆա» ֆիլմը շատ տեղ չի հատկացնում Աթաթուրքի քաջագործություններին ու նվաճումներին: Փոխարենը նրան պատկերում է որպես միայնակ, մելանխոլիկ, երբեմն մթությունից վախեցող մի անձնավորություն՝ թուրքական ավանդական «ռաքին» ըմպող եւ օրական երեք տուփ սիգարետ ծխող:

«Ես ցանկացա Աթաթուրքին ներկայացնել նոր սերնդին որպես մեզանից մեկին, որպես սովորական մի անձնավորության, որն ունի իր թերությունները, եւ ոչ թե այն տիպարին, որ մեզ են ներկայացնում դպրոցում, կամ բանակում», բացատրել է Դունդարը՝ «Ասոշիեյթեդ պրեսին» տված հարցազրույցում: «Ի՞նչ վատ բան կա, որ հրամանատարը ռազմաճակատից սիրային նամակ է գրում իր ընտրյալին: Մարդիկ ինձ քննադատում են դրա համար, ասելով, որ նրան պատկերել եմ որպես կնամոլ: Աթաթուրքին «դոգմա» են դարձրել՝ քարացած սրբություն, իսկ ես նրան տեսնում եմ որպես դժվարություններ ունեցող, պայքարող, նաեւ սայթաքող եւ երբեմն վեհերոս անձնավորություն», ավելացրել է նա:

«Ֆիլմը բացահայտումներ չի պարունակում, հազարավոր գրքեր են գրված նրա մասին, բայց թերեւս առաջին անգամ է անդրադառնում նրա անձնական կյանքին՝ օգտագործելով արխիվային նյութեր, սեւ ու սպիտակ պատկերներ», եզրակացնում է հոդվածագիրը: «Աշխարհիկ կառույցները անհանգստացած են, քանի որ հանրապետության հիմքերն են քննության առնված, բայց մյուս կողմից՝ նման ֆիլմի ստեղծումը խոսում է այն մասին, որ հասարակությունը հասունանում է եւ կարող է նման հարցեր քննարկել», կարծիք է հայտնել գրող Հյու Պոոը:

Մասնագետների ու պատմաբանների համոզմամբ, մահմեդականությանն ու խուրդ ազգայնական շարժմանը վերաբերող Աթաթուրքի բազմաթիվ նամակներն ու ծրագրային փաստաթղթերը մինչ օրս փակի տակ են մնում զինվորական արխիվներում:

Թարգմ. Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՄԱՄՈՒԼ

Թուրք նախկին դեսպանը նախազգուշացնում է Օբամային

«Կալիֆոռնիա կուրիեր» թերթի խմբագիր, հետեւողական գրչի տեր Հարութ Սասունյանը նոր փաստերով դարձյալ անդրադառնում է ԱՄՆ-ի նորընտիր նախագահի վրա ճնշում գործադրելու Թուրքիայի փորձերին: Ստորեւ նրա հոդվածը՝ թարգմանաբար:

Թուրք պաշտոնյաները հետզհետե ավելի են մտահոգվում Մ. Նահանգների նորընտիր նախագահ Բարաք Օբամայի հայկական հարցերի վերաբերյալ ունեցած դիրքորոշումից: Հետեւաբար փորձում են սիրաշահել նրան եւ նրա թիմակիցներին՝ օգտագործելով տարբեր միջոցներ:

Նույնիսկ թոշակառու, նախկին դիվանագետներ են ընդգրկվում այդ «խաղի» մեջ: Վաշինգտոնում նախկին թուրք դեսպան Ֆարուք Լոջոջլուն վերջերս մի երկար «բաց նամակ» է ուղարկել Օբամային: 23 կետերից բաղկացած այդ նամակը Մ. Նահանգներ-Թուրքիա հարաբերությունների տարբեր ոլորտներին է անդրադառնում եւ տպագրվել է «Թուրք արդյունաբերողների եւ գործարարների ասոցիացիայի» (TUSIAD) հրատարակած Private View հանդեսի 2008-ի աշնանային համարում:

Դեսպան Լոջոջլուն եղել է «Եվրասիական ռազմավարական ուսումնասիրությունների կենտրոնի» (ASAM) նախագահը: Նա ներկայումս էլ Թուրքիայի արտգործնախարարության Ռազմավարական ուսումնասիրությունների կենտրոնի վարչության անդամ է: «Սիրաշահեմ Թուրքիային որպես գլխավոր գործընկերոջ» վերնագրով նամակը եզակի հնարավորություն է տալիս ծանոթանալու Թուրքիայի արտգործնախարարության քաղաքական ծրագրերին եւ առհասարակ մտածողությանը:

Նա իր նամակը սկսում է Մ. Նահանգների եւ Թուրքիայի միջեւ զոր նմանություններ որոնելով: Նա թյուրիմացաբար պնդում է, թե երկու երկրները «միեւնույն արժեքներն ու ազգային շահերն են» հետաքրքրում, ինչպիսիք են «ժողովրդավարությունը, օրենքի իշխանությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը, հիմնական ազատությունները եւ շուկայական տնտեսությունը», եւ հանգում է այն եզրակացության, որ երկու երկրների օրակարգային, առաջնային խնդիրներն ու կարիքները համընկնում են իրենց բովանդակությամբ:

Զարմանալի չէ, որ նա քանիցս անդրադառնում է հայկական խնդիրներին: Նամակի երկրորդ կետում նա նշում է, որ Մ. Նահանգներ-Թուրքիա հարաբերությունները բարելավվել են «անցյալ տարի Կոնգրեսում Հայկական ցեղասպանության բանաձեւի քննարկումների դադարեցումից հետո»:

Դաստիարակելու տոնով գրված նամակում դեսպան Լոջոջլուն անընդհատ խորհուրդներ է տալիս Օբամային, թե ինչպես պետք է վարվի պաշտոնը ստանձնելուց հետո: 6-րդ կետում նա պահանջում է, որ նորընտիր նախագահը «թուրքերին սիրաշահելու քաղաքականությունը» համարի իր առաջին պարտականությունը, քանի որ հասարակական հարցումները քանիցս ցույց են տվել, որ Թուրքիայի բնակչությունը շատ վատ կարծիք ունի Մ. Նահանգների վերաբերյալ»:

Նամակի յոթերորդ կետում Օբամային իր «կրտսեր գործակատարը» համարող նախկին դեսպանը հրամայում է նախագահին «անվնաս դարձնել... հայերի եւ մյուս հակաթուրք քարոզչական ընկերությունների ջանքերը»: «Դուք պետք է համոզեք թուրք հասարակությանը, որ արդարացի եք վարվում եւ տեղի չեք տալիս որեւէ խմբակցության պահանջների առաջ, հատկապես եթե այդ պահանջները առնվազն վիճելի են», գրում է նա:

Ութերորդ կետում նա հայտարարում է, որ Հայոց ցեղասպանության բանաձեւն ու քրդական ՔԿՔ-ի դեմ պայքարը պետք է լինեն այն երկու կոնկրետ հարցերը, որոնց Օբաման պետք է անդրադառնա իր նախագահության առաջին օրերին: «Այս հարցերը մեր հարաբերությունների նորմալացման «մեխն» են կազմում: Կոնգրեսում անցկացված որեւէ հայանպաստ որոշում նշանակալի, եթե ոչ անուղղելի վնաս է հասցնելու Ձեր հեղինակությանը Թուրքիայում եւ փչացնելու է մեր հարաբերությունների ամբողջ կառուցվածքը: Ավելին, դա չի լուծելու որեւէ հարց եւ, փոխարենը խանգարելու է Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ սկսված դական գործընթացին:

Դուք պետք է քաջալերեք այդ գործընթացը, որն ընթանում է երկխոսության եւ հաշտեցման ոգով», գրում է նա:

Տասներկուերորդ կետում նա հավաստիացնում է, որ Թուրքիան ցանկանում է դառնալ «էներգիայի կենտրոն», որպեսզի «հակակշռի ռուսական գերիշխանությանը այս բնագավառում»: Այս նախադասությունը ինքնին բացահայտում է Ռուսաստանի Դաշնության հետ ընկերական հարաբերություններ հաստատելու թուրքական կառավարության կեղծավորությունը: Դա միաժամանակ շարունակությունն է օսմանյան այն քաղաքականության, որ ձեւանալով երկու հզոր պետությունների բարեկամ՝ իրականում Թուրքիան աշխատում է մեկը մյուսի դեմ լարել:

Քսաներկուերորդ կետում նա խորհուրդ է տալիս Օբամային Ռուսաստանի հետ իր հարաբերություններում չմոռանալ «ԱՄՆ-ի համար Թուրքիայի հատուկ կարգավիճակը»: Այնտեղ՝ բարելավել դական հարաբերությունները Ռուսաստանի հետ, քանի որ դա «բխում է մեր ազգային շահերից»:

Վերջում նախկին դեսպանը հրավիրում է նորընտիր նախագահին այցելել Թուրքիա «ամենավաղ հնարավորության դեպքում», որպեսզի ավելի ջերմ մթնոլորտում հարթվեն խնդիրները:

Հավանաբար ո՛չ Օբաման, ո՛չ էլ իր օգնականներից որեւէ մեկը ժամանակ չեն ունենա կարդալու այս երկարաշունչ նամակը: Բայց դա մի ավելորդ անգամ եւս հաստատում է, թե ինչքան լարված են թուրքերը Օբամայի նախագահ դառնալուց եւ նրա նախընտրական խոստումների իրականացման հեռանկարներից:

Թարգմ. Հ. Ծ.

Մարտին Օբրին դարձավ Ֆրանսիայի սոցկուսի առաջնորդ

Երկարատեւ եւ անզիջում պայքարից հետո Լիլի քաղաքագլուխ Մարտին Օբրին ընտրվել է Ֆրանսիայի Սոցիալիստական կուսակցության ղեկավարի պաշտոնում: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

Հրապարակված պաշտոնական տվյալների համաձայն, Օբրին կարողացել է իր գլխավոր ախոյան Սեգոլեն Ռուայալին հաղթել ընդամենը 102 քվեի առավելությամբ (քվեարկությանը մոտ 137 հազար մարդ էր մասնակցում):

«Ֆիգարո» թերթին տված հարցազրույցում Սեգոլեն Ռուայալը, որը սոցիալիստների նախկին առաջնորդ Ֆրանսուա Օլանդի նախկին կինն է, ափսոսանք է արտահայտել լարված պայքարից հետո քվեների շատ փոքր տարբերությամբ տանուլ տալու կապակցությամբ, ավելացնելով, որ ինքն արդեն մտածում է 2012 թվականի ընտրությունների մասին:

Ավելի վաղ Ռուայալը վիճարկել էր ընտրությունների արդյունքները, սակայն կուսակցության հատուկ հանձնաժողովը եւ սոցկուսի բարձրագույն խորհուրդը նոյեմբերի 25-ի նիստում որեւէ ընտրախախտում չէին բացահայտել:

Ակնկալվում է, որ ընտրությունների պատճառով Սոցիալիստական կուսակցության շարքերում սկիզբ առած պառակտումը վերջ կդնի, եւ Մարտին Օբրին կկարողանա համախմբել ներկայումս ընդդիմադիր հարող համախմբվող կուսակցության անդամներին: Սակայն Ֆրանսպրեսը նշում է, որ ընտրությունների ընթացքում ծագած ներկուսակցական վեճերն առայժմ լուկ խորացնում են Օբրիի եւ Ռուայալի կողմնակիցների պառակտվածությունը:

Սոցիալիստները ներկայումս խորհրդարանում չունեն տեղերի մեծամասնություն, բայց վերահսկում են շրջանային կառավարման գրեթե բոլոր մարմինները, ինչպես նաեւ Փարիզի, Լիոնի եւ Թուլուզի մունիցիպալ վարչակազմերը:

ՀԱՄԱՌՈՏ

Գրենլանդիան ընդլայնում է իր ինքնավարությունը

Գրենլանդիայի բնակչության մեծ մասը հանրաքվեի միջոցով նոյեմբերի 25-ին արտահայտվել է Դանիայից կղզու ինքնավարության ընդլայնման օգտին: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ հանրաքվեի ընթացքում կղզու լայն ինքնավարության օգտին արտահայտվել է գրենլանդացիների 75,54 տոկոսը, դեմ է արտահայտվել 23,57 տոկոսը:

Տեղական իշխանությունների տվյալներով, հանրաքվեին մասնակցել է կղզու 39 հազար չափահաս բնակիչների 74,98 տոկոսը:

Դանիական տիրույթ Գրենլանդիան 1979-ին ստացավ Դանիայի կազմում ինքնակառավարվող տարածքի կարգավիճակ: Ինքնավարության ընդլայնմանը վերաբերող հանրաքվեի արդյունքները Գրենլանդիայի իշխանությունների թույլ կտան տնօրինել կղզու բնապաշարները: Բացի դրանից, գրենլանդացիները կկարողանան ինքնուրույն զբաղվել դատական համակարգի եւ իրավակարգի հարցերով, ինչպես նաեւ որոշակի չափով վերահսկել արտաքին քաղաքականությունը: Մինչեւ օրս կղզու իշխանությունները տնօրինում էին միայն առողջապահությունը, դպրոցական կրթությունը եւ բնակչության սոցիալական սպասարկումը:

Տեղացի մի շարք քաղաքագետներ կարծում են, որ հանրաքվեի շնորհիվ ինքնավարության ընդլայնումը կարետոր քայլ է Գրենլանդիայի անկախացման ճանապարհին:

Գրենլանդիան աշխարհի ամենամեծ կղզին է. մակերեսը 2,166 մլն քառակուսի կիլոմետր է, բնակչությունը՝ 58 հազար մարդ: Աշխատունակ բնակչության կեսից ավելին զբաղված է ձկնորսությամբ եւ ձկնավերամշակման արդյունաբերության մեջ: Դանիան ամեն տարի Գրենլանդիային հատկացնում է 3,2 մլրդ կրոն (մոտ 539 մլն դոլար), որը կազմում է կղզու ՆՀԱ մոտ 30 տոկոսը:

Ռոբերտ Գեյթսը կմնա պաշտպանության նախարարի պաշտոնում



ԱՄՆ պաշտպանության նախարար Ռոբերտ Գեյթսը համաձայնել է իր պաշտոնում մնալ նաեւ նորընտիր նախագահ Բարաք Օբամայի օրոք: Պարզվում է, որ Օբաման այդ մասին կհայտարարի Գոհաբանության օրը, որն այս տարի ԱՄՆ-ում նշվում է այսօր, նոյեմբերի 27-ին:

Politico կայքէջի տվյալներով, Գեյթսն իր պաշտոնում կմնա առնվազն մինչեւ 2010 թվականի սկիզբը եւ կնախապատրաստի Իրաքից ամերիկյան զորքի դուրսբերումը:

CNN եւ ABC News հեռուստաալիքների աղբյուրները նույնպես հաստատում են, որ Գեյթսը մնալու է պաշտպանության նախարարի պաշտոնում:

Ըստ ամերիկյան ԶԼՄ-ների, հայտնի են նոր վարչակազմում պաշտոնների մի շարք թեկնածուների անուններ: Այսպես, ազգային անվտանգության գծով Օբամայի խորհրդականը կդառնա պաշտոնաթող գեներալ Ջեյմս Ջոնսը: ՄԱԿ-ում ԱՄՆ մշտական ներկայացուցչի պաշտոնը կզբաղեցնի Սյուզան Ռայսը, որը նախընտրական արշավի ժամանակ արտաքին քաղաքականության գծով Օբամայի խորհրդականն էր եւ Բիլ Քլինթոնի վարչակազմի նախկին աշխատակիցներից է:

Ազգային հետախուզությունը կտնօրինի պաշտոնաթող ծովակալ Դենիս Բլեյրը: Հիլարի Քլինթոնը կդառնա պետքարտուղար, Ջեյմս Սայնբերգը՝ պետդեպարտամենտի ղեկավար:

Մակֆեյնը կփորձի 5-րդ անգամ սենատոր ընտրվել

ԱՄՆ նախագահական ընտրություններում պարտություն կրած հանրապետական թեկնածու, Արիզոնայի սենատոր Ջոն Մակֆեյնը մտադիր է հինգերորդ ժամկետով տեղ զբաղեցնել Սենատում: Ֆրանսպրեսը նշում է, որ խոսքը 2010 թվականին Սենատում կայանալիք միջանկյալ ընտրությունների մասին է:

Երեկ Մակֆեյնը հայտարարել է, որ ինքը հպարտությամբ է հիշում ավարտված նախագահական ընտրարշավի օրերը: Այժմ նա մտադիր է վերադառնալ Սենատում իր պարտականությունների կատարմանը:

Մակֆեյնը նաեւ կպայքարի, որպեսզի Արիզոնայի նահանգապետ Ջանետ Նապոլիտանոն նորընտիր նախագահ Բարաք Օբամայի վարչակազմում զբաղեցնի ազգային անվտանգության նախարարի պաշտոնը:

Սենատում Մակֆեյնը Արիզոնայի ներկայացուցիչն է 1987 թվականից: Նա մտադիր է առաջիկայում պայքարել դաշնային բյուջեի չափազանց մեծ ծախսերի դեմ, ներգաղթի քաղաքականության բարեփոխման օգտին: Դեկտեմբերին նա դիտորդական առաքելությամբ ներկա կլինի Բանգլադեշում կայանալիք ընտրություններին:

«Օդի, ջուրի, հացի նման Մենք պետք ունինք հպարտություն...»

Շնորհանդես եւ ֆիլմադիտում «Նարեկացի» արվեստի միությունում

Նախորդ օրը «Նարեկացի» արվեստի միության սրահում տեղի ունեցավ Քաջաթաղի շրջկենտրոն Բերձորի բնակիչ, ֆուտբոլասեր Խաչիկ Բաղդասարյանի «Անկյունային» գրքույկի շնորհանդեսը եւ Տիգրան Խզմալյանի 1998 թվականին հեղինակած «Արարաս-73» ֆիլմի դիտումը: Ներկաների շարքում էին «Արարաս-73»-ի առանցքային խաղացողներից Նիկոլայ Ղազարյանը, Արկադի Անդրեասյանը եւ Սերգեյ Պողոսյանը, ինչպես եւ թիմի հեսագա հենասյուներից Խորեն Հովհաննիսյանը:

Հետաքրքրական է գրքույկի երեսուփթ ինքնին: «Արարաս-73»-ի 35-ամյակը տիսի որ Բերձորում մեկուկես տասնամյակ առաջ հաստատված մասավորական Խաչիկ Բաղդասարյանը հիշեր ու այս տարեդարձին նվիրեր իր նոր հրատարակությունը, որը լույս է տեսել Ստեփանակերտում՝ մի քանի օր առաջ: Հեղինակի մուտքի խոսքում ասված է, թե նա իր պատմվածքում կերտավորել է հայկական ֆուտբոլի մեծագույն դեմքերին՝ ընդհանուր եւ հավաքական մի կերտարում:

Շնորհանդեսին ելույթ ունեցան հեղինակը, հասարակական գործիչ Գարեգին Ղազարյանը, ռեժիսոր Տիգրան Խզմալյանը եւ ուրիշներ: Սկզբում ներկաները միմյանց շնորհավորեցին ՀՀ շախմատի հավաքականի Դրեզդենում երեկ նվաճած փառքի համար: Այս հաղթանակը համեմատվեց «Արարատի» 1973 թվականի կրկնակի նվաճումների հետ: Հատուկ նշվեց, որ ֆուտբոլը եւս, նախ եւ առաջ, մտքի խաղ է: Ներկաները խոր ցավով իմացան, թե «Արարաս-73»-ի վետերանների թոշակը ամոթալի գումար է՝ 17 հազար դրամ (ՀՀ իշխանավորները ամոթի զգացում ունե՞ն արդյոք):

Այնուհետեւ ցուցադրվեց «Արարաս-73» ֆիլմը, որը Տիգրան Խզմալյանը ռուսերենով պատրաստել է «Երեւան» կինոստուդիայում եւ որն արժանացել է ընդամենը մեկ ցուցադրման 1998 թվականին: 28 ռոմեանոց վավերագրական ֆիլմը ֆուտբոլային թիմի հաղթանակները ներկայացնում է 20-րդ դարի հայոց պատմության համաբարադրանքում՝ Հայոց ցեղասպանություն, Երկրորդ աշխարհամարտ, մեծ հայրենադարձություն եւ հայկական գրավյալ հողերի մի մասի ազատագրության սովետական ծրագրեր, Մոլոտովի տխրահռչակ հայտարարություն, Տիգրան Պետրոսյանի շախմատային չեմպիոնական նվաճումը 1963 թվականին, Մեծ եղեռնի 50-ամյակի նշումները Երեւանում եւ սփյուռքում՝ ընդհուպ 1980-ականների վերջի արցախյան շարժումը: Ֆիլմը մինչեւ ողնուծուծը ողողված է ազգային հպարտության եւ հաղթանակների կերտման կամքի ոգով:

Ուղղակի անհասկանալի, այլեւ դատապարտելի է այն փաստը, որ Տիգրան Խզմալյանի նկատմամբ հայտարարված պատերազմի պատճառով (այլապես ո՞րն է գոնե այս օրերին ֆիլմը չցուցադրելու պատճառը) ֆիլմը չի ցուցադրվում մեծ պատասռի վրա՝ կինոթատրոններում եւ հեռուստաեթերում, որոնցում տերն ու տիրականը աղբն է, մինչդեռ մենք կարիք ունենք հայ բանաստեղծության իշխան Վահան Թեքեյանի՝ այս հրապարակման վերնագրում նշվածին՝ հպարտության:

ԳԵՎՈՐԳ ՅԱՔՈԲՅԱՆ

Թումանյանական օրեր Կիեւում

Օրերս Կիեւում տեղի ունեցավ Թումանյան-Շեւչենկո եռօրյա գիտական նստաշրջան, որը կազմակերպել էր Գիտությունների ազգային ակադեմիայի գրականության ինստիտուտն ու Շեւչենկոյի անվան համալսարանը: Հայկական պատվիրակության կազմում էին ԳԱԱ գրականության ինստիտուտի տնօրեն Ավիկ Իսահակյանը, Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանի տնօրեն Ռուզաննա Սարյանը, թումանյանագետ Սուսաննա Հովհաննիսյանը, գրականագետ Գուրգեն Հովհաննիսյանն ու այլ պատվավոր անձինք:

«Ուկրաինացիները մեկ տարի առաջ սկսեցին տոնել Թումանյանի ծննդյան 140 ամյակը: Հուսադրող էր հայապահպանության բարձր հիմքերի վրա լինելը: Բազմաթիվ հայեր մեծ նվիրումով են աշխատում՝ պահպանելով հայ մշակույթի բարձրությունը ոչ միայն հայերի, այլեւ ուկրաինացիների համար: Բազմաթիվ դպրոցներում անցկացվել էին հատուկ դասեր նվիրված Թումանյանին: Զարմացել էինք, թե ուկրաինացի դպրոցականներն ինչպիսի հիացմունքով էին շարադրություններ գրել Թումանյանի ստեղծագործությունների մասին: Երեխաները մեծ բանաստեղծին անդրադարձել էին նաեւ կերպարվեստի միջոցով՝ նկարազարդելով մեծ բանաստեղծի հայտնի հեքիաթները», **«Ազգ»-ի** հետ զրույցում ասաց թումանյանագետ Սուսաննա Հովհաննիսյանը:

Թումանյանական օրերի ընթացքում տեղի ունեցավ երգահան Մացոյանի բեմադրած «Անուշ» օպերայի պրեմիերան: «Մասնակցում էր Ուկրաինայի պետական երգչախումբն ու պետական սիմֆոնիկ նվագախումբը: Զարմանալի երեւույթ էր: Դերակատարները ուկրաինացիներ էին, սակայն Անուշը հրաշալիորեն կատարվեց հայերեն լեզվով: Ինչքան պետք է սիրեին Թումանյանին, ու ինչքան սիրով բեմադրեին «Անուշը», որ արդյունքն այդքան լավը լիներ: Անգամ Փարիզից էին հայեր ժամանել օպերան ունկնդրելու համար», ասաց թումանյանագետը նշելով, որ բանաստեղծի հոբելյանական օրերի շրջանակներում տեղի կունենան գրական ընթերցումներ, պոեզիայի երեկոներ:

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

3000 տարվա պատմության 300 լուսանկար



Օրերս Բրազիլիայի Ռոնդոնիա նահանգի Պորտո Վելիո քաղաքում «Հայաստան. 3000 տարվա պատմություն» խորագրով լուսանկարչական ցուցահանդես է բացվել, որի այցելուները 300 լուսանկարների, հայկական երաժշտության, «Կորուսյալ հայրենիք» եւ «System of a down» խմբի «Screamres» ֆիլմերի միջոցով ծանոթացել են Հայաստանին:

Ցուցահանդեսի կազմակերպիչները լուսանկարների միջոցով փորձել են պատմել Հայաստանի մասին՝ սկսած երկրի աշխարհագրական դիրքից մինչեւ տնտեսական ու գիտական ձեռքբերումները, մինչեւ համազգային ողբերգություններն ու տոնակատարությունները: Ստացած հաղորդագրությունից տեղեկանում ենք, որ մինչեւ դեկտեմբերի 12-ը շարունակվող ցուցահանդեսի կազմակերպիչներն արդեն ակնհայտ հաջողությունից ելնելով, այն Բրազիլիայի Ռոնդոնիա նահանգի այլ քաղաքներում էլ ներկայացնելու մտադրություն ունեն:

Ն. Պ.

ՅՈՒՆԵՍԿՕ-ի մրցանակը՝ Աֆղանստանի Հերատ քաղաքին

ՅՈՒՆԵՍԿՕ-ի առաջին միջազգային մրցանակը տրվել է Աֆղանստանի հանգույն Հերատ քաղաքին՝ ասիական տարածաշրջանի պատմամշակութային հուշարձանների պահպանման ու վերականգնման համար: Մրցանակը շնորհվել է երկրի մշակույթի նախարարին, որը, ինչպես տեղեկացնում են ռուսական լրատվամիջոցները, կարողացել է արգելել 15-րդ դարի կառույցների գոյությունը վտանգող մայրուղու կառուցումը: Մրցանակակիր քաղաքը մեծությամբ երրորդն է Աֆղանստանում եւ հիմնադրվել է մ.թ.ա. 6-րդ դարում:

Հերատը նվաճել է Ալեքսանդր Մակեդոնացին, որի օրոք էլ կառուցվել է միջնաբերդը: 13-րդ դարում քաղաքն ավերել են մոնղոլները, չնայած դրան այն դարձել է Մեսափի ճանապարհի կարեւոր օղակ: Քաղաքի ծաղկման գագաթնակետը համարվում է 15-րդ դարը, որով էլ թվագրվում են Հերատի պահպանված հուշարձանների հիմնական մասը: Եվ սա Իրանում ոչնչացված շատ ավելի հնագույն քաղաքակրթության հետքերի վերացման ֆոնին:

Ն. Պ.

ԽՈՍՔ ՀՐՇԱՏԱԿԻ

Վանեցի հայ դրամատուրգը

Ազատ Շահինյան անուն-ազգանունով այս վանեցին արվեստի մարդ էր: Բարդ ու պարզ մի մարդ, որ բազմահազար մանուկների սիրելին էր իր «Սուտի եւ Սամի արկածները», «Իմ սիրելի փոքրիկը», «Արագիլ, բարով եկար», իսկ մեծերի հարգանքի ու նախանձի արժանացած «Տրամվայը պարկ է գնում», «Բանտարկյալը», «Մարդիկ եւ ձկներ» պիեսներով, չհաշված անտիպ ու չբեմադրված բազմաթիվ ավարտված ու անավարտ ստեղծագործությունները:

Մարդ՝ ընտանիքի համար, արվեստին ու ժողովրդին անմնացորդ ծառայելու համար: Եվ վերջապես, մի մարդ, որ Երեւանի թատրասեր հասարակայնությանը հայտնի էր որպես (ինչպես ինքն էր իրեն կոչում) դրամազուրկ Ազատ Նիկոլայի Շահինյան:

Շատ հաճախ Ազատին կարելի էր տեսնել ինչ-որ սկսնակ բանաստեղծի (իսկ Ազատը անգիր գիտեր հայ եւ համաշխարհային պոեզիան՝ նվիրյալ էր, իսկական պոեզիային եւ անխնա քննադատում էր նորելուկ սուտի-մուտի պոետիկներին) հետ վիճելիս իր բամբ ձայնով, խուլ կոկորդային հնչյուններով, վայրկյանը մեկ թունդ ծխախոտի քուլաներ արձակելով:

- Դուք ի՞նչ պոետ եք, ի՞նչ նորարարներ, ահա՛ պոեզիան. եւ սկսում էր.

«Այն գիշերից հետո ես չեմ հիշում ոչինչ/Ո մասներից բացի/Գիշերն երազ դարձավ ու մասներդ դարձան/Հողերն այգաբացի...»

Եվ սկսում էր պատմել 20-րդ դարի անհայտ մի երիտասարդ բանաստեղծի գրած այս բանաստեղծության կենսագրությունը՝ թե ինչպես «մեկ բանաստեղծության երեկո»-ի ժամանակ 1943 թվականին Ավետիք Իսահակյանը առաջին մրցանակը տալով սպիտակցի այս անհայտ տղային ասել էր.

- Եթե Տերյանը ապրեր՝ այս բանաստեղծությունը ինքը կգրեր:

Հայի ճակատագիր՝ անհայտ հայ հեղինակ. անշիրիմ հայ եւ վերջապես հալածանքներից հոգնած ինքն իրեն ափերից դուրս ու ներս «լափին տալով» նույնիսկ ինքն իր հետ յոլա չգնացող մեր Ազատը հաճախ էր հիշում իր գրական առաջին ուսուցիչ Վեսպերին, որ բազմաթիվ հատորներ էր տպագրել, իսկ Ազատի կարծիքով, հայ գրականությունը հարստացրել էր ընդամենը մի քառյակով.

Աշխարհը ձյուն է, տղա՛/Աշխարհը՝ ձյուն Մասիսի/Աշխարհը ցուրտ է, տղա՛/ Վարդեր չկան մայիսի...

Ազատը բանավոր դրամատուրգ էր, իր տաղանդը զրուցակիցներին բռայլորեն բաժանող ասողիկ, բանավոր թատրոն:

Ազատ Շահինյանի կյանքի ամենագլխավոր հերոսը Անժիկն էր: Կարծես իրար հետ էին ծնվել. մեկը մեկին գուրգուրող ու տանջող, հավերժորեն սիրահարված եւ հավերժորեն դժգոհ իրարից:

- Մնժ...- կես գիշերին բղավում էր Ազատը՝ խանգարելով Արթուրի եւ Անահիտի քունը... Իսկ Անժիկը կիսարթուն վազում էր, որ լսի հերթական դիալոգը, կամ ջնջած ու կրկին հայտնագործած նախադասությունը: Անժիկի գրաքննադատական «այո»-ն կամ «ոչ»-ը լսելուց հետո նա անմիջապես որոշում էր, թե առավոտյան Ղազարյան Արշավիրին, Անանյան Ժիրայրին, Չեռչյան Ժորային, Թումասյան Վալերիկին, Թաթուլ Հովհաննիսյանին, թե՞ Գետրգ Կարապետյանին զանգի կամ հանդիպի եւ ճշտի իր հորինածի մարդությունն ու իսկությունը՝ իր տառ ու բառի տեղն ու տունը: Եվս մի զարմանահրաշ հատկություն՝ կասկածում էր հավատացյալի նման՝ ինքն իր հավատը փնտրում էր ընկերների մոտ:

Հաճախ էր հիշում եւ անընդհատ արտասանում էր Շնորհալու տողերը.

Երբ մահվան դժգույն հրեշտակը փչե յուր փողը խիստ/Եվ ահեղ դատաստանին կանչէ տղա ու ծեր/Այդ ահատաս օրը հիշիր ամենքին, Տե՛ր/Հիշիր մեռյալներին, որ ինած են հանգիստ:

Ու հանկարծ հիշեցի Շալյապինի հուշերը Վերդիի մասին: Մեծանուն

երգիչը առաջին անգամ մտնելով Իտալիա՝ իր հոգու պարտքն է համարում այցելել հանճարեղ իտալացուն: Դեպի Վերդիի տուն տանող ճանապարհին նա տեսնում է, որ սալահատակ փողոցը մարդիկ ծածկում են ծումբերով (խոտացեխաբլոկներով, ճիմերով) երբ կառապանին հարցնում է, թե ինչ են անում, կառապանը շատ ցածր ձայնով ասում է.

-Վերդին հիվանդ է, որ կառերի անիվների ձայնը չլսվի:

Ահա թե ինչպես էին հարգում իրենց հանճարին երգասեր իտալացիք:

Իսկ մե՞նք... Ազատ Շահինյանի անունն ու հիշատակը վկա... (հիշենք մեր բոլոր մեծերին): Մեկ էլ նախանձում եմ վրացիներին, որ օպերային թատրոնում Կոնստանտին Գամսախուրդիայի նստած աթոռին առ այսօր ոչ ոք չի նստում): Գրել Ազատ Շահինյանի մասին, նշանակում է ոչինչ չգրել: Ինքը կենդանի լեգենդ էր եւ տարածված, սփռված է իր ողջ ստեղծագործությունների մեջ՝ ինչքան որ ապրել է, իսկ ինչքան դեռ կարող էր ստեղծել:

Տարավ, շատ բան տարավ իր հետ այդ զարմանահրաշ հայը... Մեր Ազատ Շահինյանը: Հիմա կլիներ ութսուն տարեկան...

Հ. Գ. Մենք այնպես ենք թաքցնում ու ջնջում մեր մեծերին, որ նրանք մահից հետո էլ պայքարում են իրենց անմահության համար:

Իրենց նվաճած անմահության համար: Ողջույն եւ հրաժեշտ:

Մահից ծնունդ թեզ՝ Սիրելի մանուկ ու մարդ, հայ դրամատուրգ Ազատ Շահինյան:

ԹԱԹՈՒԼ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ռոբոտներն են բեմում

Ճապոնիայում ոչ միայն ռոբոտներ են ստեղծում, այլեւ ռոբոտների թատրոն ունեն, որը բեմադրել է առաջին պիեսը՝ Օսակի համալսարանում: Ոչ բոլոր դերերն են վստահվել ռոբոտներին: Ինչպես տեղեկացնում է BBC News-ը, ըստ պիեսի հեղինակի, այն մարդու եւ տեխնոլոգիաների կարի մասին է եւ կոչվում է «Ես աշխատավոր եմ»: Գործողությունները ծավալվում են ոչ հեռու ապագայում եւ պատմում երկու ռոբոտ ունեցող երիտասարդ ընտանիքի մասին: Աշխատանքի հանդեպ հետաքրքրությունը կորցրած ռոբոտներից մեկը հարկ է համարում իր գործառույթներն ու նրանց կյանքը փոխել իր դերակատարության կարեւորությունը տերերի հետ քննարկել: 20 րոպե խոսել ու շարժվելու ձիրք են պարգեւել Mitsubishi ընկերության մասնագետները երկու ամսում: Ներկայացման հեղինակները մտադիր են մինչեւ 2010 թվականը այն լիամետրաժ ձեւաչափով բեմադրելու: Գուցե մարդն ինքն իրեն չի՞ հերքում կամ պարզապես ժամանակ չունի՞ իր եւ դիմացինի ներաշխարհը դիտարկելու, սիրելու: Կարեւորը՝ այդ ցանկությունը փնտրելն է:

Ն. Պ.

Երեւանը ցնծությամբ դիմավորեց օլիմպիադայի հերոսներին

Երեկ բազմամարդ էր Երեւանի «Զվարթնոց» օդանավակայանը, որտեղ հավաքված բազմությունը զանազան ցուցադրասառներով, Հայաստանի դրոշներով եկել էր դիմավորելու Դրեզդենում ավարտված շախմատի համաշխարհային 38-րդ օլիմպիադայի հերոսներին: Այնտեղ էին նաեւ պաշտոնական այրեր՝ վարչապետ Տիգրան Սարգսյանի գլխավորությամբ: Երեւանի ժամանակով 19.10-ին վայրէջք կատարեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ինքնաթիռը՝ իր հետ բերելով օլիմպիական չեմպիոններին: Քիչ անց նրանք մեքենաներով հայտնվեցին բազմության առջեւ՝ մեծ ցնծություն առաջացնելով դիմավորողների շարքում, որոնք ծածանում էին դրոշներն ու վանկարկում «Հայաստան, չեմպիոն, Հայաստան, չեմպիոն», «Կեցցե՛ք տղաներ»: Պատվո պահակախմբի ուղեկցությամբ մեր շախմատիստները ուղեւորվեցին Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր, որտեղ նրանց պատվին տոնական համերգ էր կազմակերպվել: Դահլիճում ներկաները ծափահարություններով եւ բացականչություններով դիմավորեցին նախագահ Սերժ Սարգսյանին ու հայ շախմատիստներին:

Ողջույնի խոսքով ներկաներին դիմեց հանրապետության նախագահ **Սերժ Սարգսյանը.** «Սիրելի՛ հայրենակիցներ, շնորհավորում եմ բոլորիս շախմատի համաշխարհային օլիմպիադայում Հայաստանի հավաքականի փայլուն հաղթանակի առթիվ:

Այսօր տոն է բոլորիս համար. ինձ համար սա եռակի տոն է: Ես ցանկանում եմ խոսել որպես Հայաստանի Հանրապետության նախագահ, որպես Հայաստանի շախմատի ֆեդերացիայի նախագահ եւ որպես պարզապես շախմատասեր, ով երեկ, բոլորի նման, սպասում էր մեր հավաքականի հաղթանակին: Ես համոզված եմ, որ հնարավորության դեպքում ողջ հայությունը Դրեզդենում կլիներ՝ մեր տղաներին զորակցելու համար: Թերեւս ազգային միասնականության այդ համատարած զգացումը մեր ամենամեծ հաղթանակն է:

Չեմպիոնի կոչումը նվաճելը դժվար է, իսկ չեմպիոնական տիտղոս պաշտպանելը կրկնակի դժվար է: Մենք տասնհինգ օր, շունչներս պահած, հետեւում էինք Դրեզդենում՝ խաղատախտակների վրա ծավալվող ճակատամարտերին: Մեր աչքերի առջեւ գրվում էր հայկական շախմատի պատմության եւս մի անմոռանալի էջ: Հայաստանի մարզիկներն իրենց հրաշալի խաղով, վարպետությամբ ու կամային որակներով կրկին ապացուցեցին, որ մեր երկիրը շախմատային գերհզոր տերություն է:

Այժմ ձեր առջեւ են մեր երկրի ու դրոշի պատիվը պաշտպանած հավաքականի անդամները: Առանց չափազանցության կարող եմ ասել, որ ձեր առջեւ կանգնած են մեր ժողովրդի պանծալի զավակները: Այսպիսի թիմով կարող էր հպարտանալ աշխարհի ցանկացած երկիր. նույնիսկ ամենամեծերն ու հնդեսապես ամենահզորները: Բայց այս տոնը, արդեն երկրորդ անգամ անընդմեջ, նրանք պարգեւում են հենց մեզ:

Այսօր ես հիշում եմ այն խանդավառությունը, որով դիմավորեցիք երկու տարի առաջ Թուրինի շախմատային օլիմպիադայի հաղթողներին, այն ոգեւորությունը, որ տիրում էր օդեւայի բակում: Հիշում եմ, ինչպես էին իրար խառնվել երկրպագուների ուրախությունն ու արցունքները, երբ հարթակ բարձրացան ոսկե հավաքականի հերոսները: Նրանց թվում էր նաեւ Կարեն Ասրյանը, ում տեղն այսօր, այս բեմում պետք է լիներ: Եվ այս հաղթանակը նաեւ Կարեն Ասրյանի հաղթանակն է:

Այդ օրը մենք ձեզ խոստացանք նոր հաղթանակներ: Այդ խոստումը լիովին կատարվեց: Մենք վկան ենք նոր հաղթանակի, որն ապացուցեց, որ նախկին հաջողությունը օրինաչափ էր, ապացուցեց մեր շախմատի կայացած դպրոցի հիրավի ոսկե հարգը:

Հայաստանի հավաքականը կարողացավ շախմատային հանճարով ու կամքով իրեն ենթարկել ավելի հզոր համարվող ու ավելի բարձր գործակիցներ ունեցող թիմերի:

Բոլոր օտարերկրյա մեկնաբանները միաբերան ընդգծում էին մեր հավաքականի միասնական, թիմային ոգին: Մեր ոսկե հավաքականի անդամներից յուրաքանչյուրը բացառիկ անհատականություն է, բայց բոլորը միասին թիմ են. մեկ կամք, մեկ նպատակ, մեկ դրոշ: Դրոշ, որ ծածանվում էր Դրեզդենում ի պատիվ գործող չեմպիոնների եւ ծածանվելու է նաեւ հաջորդ օլիմպիադայում: Մենք կարող ենք ու պետք է թիմային հաղթանակներ ունենանք:

Սիրելի շախմատիստներ, դուք արդեն կատարել եք մեծ քայլ, դուք կոտրել եք այն կարծրատիպը, թե մենք իբր սոսկ անհատների ազգ ենք ու կարողանում ենք հաղթել միայն անհատաբար: Դուք անգամ անհատական սպորտում կարողացաք թիմային հաղթանակ տանել:

Միասնականության այդ հաղթական ուժին մենք պետք է առավելագույն քայլը, մինչեւ վերջին ոտքն մենք հավատում էինք մեր տղաներին, նրանց մտքի թռիչքին, նրանց անպարտելիությանը: Մեր սրտերը նրանց հետ էին, եւ նրանք դա գիտեին, նրանք դա զգում էին:

Սիրելի հայրենակիցներ, այժմ ձեր առջեւ կանգնած են մարդիկ, ովքեր ոչ միայն այսօր, այլեւ վաղը նոր սերնդի համար լինելու են հայ մարզիկի եւ հայ մարդու օրինակ ու չափանիշ: Այդ մարդիկ են մեր երկրի այսօրվա հերոսները. հայրենասեր, տաղանդավոր ու հաղթանակած: Մեր հասարակությունը հենց այսպիսի հերոսների կարիքն ունի:

Համոզված եմ, որ այս դահլիճում եւ հեռուստաէկրանների առջեւ այժմ հպարտանալու բան ունենք: Ու այսօր մենք լիասիրտ ենք հպարտանում:

Կեցցե՛ք տղաներ, մենք հպարտ ենք ձեզնով: Կեցցե՛ հայկական շախմատը, փա՜ռք հայ ժողովրդին, եւ առա՛ջ Հայաստան»:

Այնուհետեւ Սերժ Սարգսյանը շախմատի համաշխարհային օլիմպիադայում ձեռք բերած փայլուն հաղթանակի, հայրենիքի մարզական պատիվը բարձր պահելու, միջազգային ասպարեզում Հայաստանն ըստ արժանվույն ներկայացնելու, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունում շախմատի զարգացումը խթանելու համար «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալներով պարգեւատրեց Հայաստանի շախմատի տղամարդկանց հավաքականի մարզիչ, միջազգային գրոսմայստեր **Արշակ Պետրոսյանին**, միջազգային գրոսմայստերներ **Լեւոն Արոնյանին, Վլադիմիր Հակոբյանին, Արաշես Մինասյանին, Տիգրան Պետրոսյանին, Գաբրիել Սարգսյանին**:

Հայաստանի Հանրապետությունում շախմատի զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի համար ՀՀ նախագահը «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալներով պարգեւատրեց Հայաստանի շախմատի ֆեդերացիայի փոխնախագահ **Լեւոն Յոլյանին**, գործարար **Արսակ Սարգսյանին**, շախմատի ֆեդերացիայի փոխնախագահ **Սմբատ Լալուսյանին**, շախմատի տան տնօրեն **Հրաչյա Թավադյանին**:

Ուրախությունն անսահման է

Գուժ Մանուկյան (դերասան)- Ինչ ասեմ, այնքան է խոսվել մեր շախմատիստների փառահեղ հաղթանակների մասին, որ մնում է երջանիկ լինել, ուրախանալ, շնորհավորել հայ ժողովրդին թե՛ ներսում և թե՛ դրսում այսպիսի աննախադեպ հաջողության համար: Անկեղծ ասած, անսպասելի էր բոլորիս համար երկրորդ անգամ չեմպիոն հռչակվելը: Դա պարզապես հայ մարդու մտքի թռիչքի արգասիքն էր: Ինձ համար շատ ուրախալի փաստ էր դա, կեցցեն տղաները: Շնորհավորում եմ հանրապետության նախագահին, ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանին աննախադեպ հաջողության համար:

Վլադիմիր Մարյան (դերասան)- Մեզ համար այսօր մեծ տոն է: Մշտապես սպասել ենք նման հաջողությունների: Արդեն երկրորդ օրն է, ուրախությանս չափ ու սահման չկա: Ցանկանում էի թոռնիկիս հետ դիմավորել մեր շախմատիստներին, սակայն մի փոքր հիվանդ էր: Սա մեծ երեւույթ է, տոն է ողջ հայության համար, ինչպես ժամանակին Տիգրան Պետրոսյանի աշխարհի չեմպիոն հռչակվելն էր: Զարմանք է առաջացնում, որ երկրորդ անգամ անընդմեջ դարձանք օլիմպիական չեմպիոն: Սա պարզապես ազգի բերկրանք ու երջանկություն է պարգեւում եւ խոսում է մեր ուժի, մեր խելքի մասին: Ինձ թվում է, որ դպրոցներում շախմատի առարկան դասավանդելը շատ ճիշտ կլինի: Կցանկանայի, որ մեր երեխաներն ավելի շատ իրենց խելքին ապավինեն, քան նույնիսկ ուժին: Ճիշտ է, տղամարդուն ուժը հարկավոր է, սակայն ներկայիս պատերազմներում ավելի շատ հաղթում է խելքը: Շնորհավորում եմ մեր հերոսներին: Սա մեզ համար մեծ պարծանք է:

Արմեն Գրիգորյան (ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար)- Կարծում եմ, կրկնակի հաջողության գրավականը թիմային ոգին էր եւ մեր շախմատիստների՝ աշխարհում լավագույնը լինելը: Նրանք մեկ անգամ եւս ապացուցեցին, որ լավագույն շախմատիստներն են եւ Հայաստանի Հանրապետությունը շախմատային գերտերություն է: Մեկ անգամ եւս շնորհավորում եմ մեր շախմատիստներին այս փառապանծ նվաճման համար: Առաջին զգացումս հպարտությունն էր: Իհարկե, օլիմպիական չեմպիոն դառնալը դժվար է, սակայն կրկնակի դժվար է այն պահպանելը:

Յուրի Առուստամյան (շախմատի ֆեդերացիայի փոխնախագահ)- Ուրախության ու ցնծության օր է: Բոլորս շատ ուրախ ենք ու հպարտ մեր շախմատիստների նվաճմամբ: Ցանկանում ենք, որ նրանք մշտապես նման հաջողություններ ունենան: Վերջին տարում մեր երկու հավաքականները հաղթեցին միլիարդանոց ժողովուրդ ներկայացնող Չինաստանի եւ Հնդկաստանի հավաքականներին: Պատկերավոր ասած, մեկը հաղթեց հազարին: Դրանից ավելի մեծ ուրախություն դժվար է պատկերացնել: Իհարկե, այս հաջողությունը մեր շախմատիստների եւ շախմատի ֆեդերացիայի քրտնաջան աշխատանքի, նրա նախագահի ուշադրության արդյունք է: Եթե բոլոր բնագավառներում էլ նման նվաճումների հասնենք, կյանքն ավելի կլավանա:

Փոքրիկ շախմատիստի նամակը մեծ շախմատիստներին

Սիրելի եւ հարգելի մեր լավ տղաներ՝ Լեւոն Արոնյան, Վլադիմիր Հակոբյան, Գաբրիել Սարգսյան, Տիգրան Պետրոսյան, Արաշես Մինասյան եւ Արշակ Պետրոսյան:

Իմ անունն է Դավիթ Արմենի Ասլանյան: Ես 7,5 տարեկան եմ: Ապրում եմ Իսրայելի Հայֆա քաղաքում, եղբորս՝ Նուբարիկի, ծնողներիս եւ տատիկիս ու պապիկիս հետ միասին: Ինձ շախմատ խաղալ է սովորեցրել Նուբար պապիկս: Նա ժամանակին խաղացել է ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ հետ (սեանսում): Այժմ բացի իմ պապիկի դասերից նաեւ հաճախում եմ շախմատի խմբակ, որ երբ մեծանամ, իսկ դուք «ծերանաք», պահեմ մեր Հայաստանի պատիվը, այնպես, ինչպես դուք նախորդ Օլիմպիադայում եւ առհասարակ:

ՍԻՐԵԼԻ ԼԵՎՈՆ ԱՐՈՆՅԱՆ

Իմ մարզիչ Վլադիմիր Վայնշտեյնը Հունաստանից բերեց Եվրոպայի շախմատի խմբակային առաջնության ազդը, որի վրա Դուք ինձ շատ հաճելի ողջույն էիք գրել: Ես շատ շնորհակալ եմ եւ պիտի պահեմ այն մինչեւ կյանքիս վերջ, իսկ մինչ այդ, համոզված եմ, որ Դուք արդեն ԱՇԽԱՐՀԻ ՉԵՄՊԻՈՆ կլինեք, եւ ես ավելի հպարտ ցույց կտամ Ձեր «նամակը», բոլորին, բոլորին, բոլորին, եւ հետո երեւի թե ես էլ պիտի չեմպիոն դառնամ: Թող հայ չեմպիոններ շատ լինեն:

Ես եւ մենք ԲՈԼՈՐԻԴ մաղթում ենք հաջողություն եւ «թշնամու» դեմ՝ խելք, ուժ ու կորով:

Շատ եմ խնդրում, կրկնեք անցած օլիմպիադայի սխրանքը:

Շատ մեծ հույսերով բոլորիդ սիրող, ձեր հետքերով եկող՝

ԴԱՎԻԹ ԱՍԼԱՆՅԱՆ

Հայֆա, Իսրայել: 19.11.08.

e-mail:noubar@012.net.il

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ

Օրվա հետքերով

ՊՐԱՀԱ

Ղարաբաղյան խնդիր. Պետք է տարել դանդաղ

Ինչպես արդեն տեղեկացրել էինք, օրերս Պրահայում տեղի ունեցավ Հարավային Կովկասի սառեցված հակամարտություններին նվիրված միջազգային համաժողով, որի ընթացքում քննարկվեցին տարածաշրջանային բոլոր խնդիրները՝ ռազմավարական հարաբերությունները, հայ-ադրբեջանական հակամարտությունն ու Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը, Կոսովոյի նախադեպը, Աբխազիայի եւ Հարավային Օսիայի ներկա վիճակը, ԵՄ-ի հետ հարաբերությունները:

Պրահայում գործող Միջազգային հարցերի ընկերակցության կազմակերպած «Հարավային Կովկասը 2008-ին եւ հետո. սառեցված հակամարտություններ կամ սառեցված խաղաղություն» ընդհանուր խորագրով համաժողովը անցկացվում էր Չեխիայի եվրոպական հարցերով փոխվարչապետ Ալեքսանդր Վոնդրայի հովանու ներքո: Այս համաժողովի քննարկումների ելույթներից պետք է առանձնացնել Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցիչ **Պիտեր Սեմնեբիի** ելույթը: Վերջինս հստակ նշեց, որ ԵՄ-ն հավաստած էր, որ կովկասյան հակամարտությունները կարող են լուծվել քայլ առ քայլ, սակայն Վրաստանի դեմքերով խախտվեց այդ կայունությունը, եւ այժմ պատերազմից հետո Եվրոպական միությունը դարձել է մի բոլոր, որ պաշտպանում է խնդրի խաղաղական լուծումը: Բացի այդ, Վրաստանի քաղաքական սիստեմը պետք է ազատ ու բաց լինի, որպեսզի նորմալ բանավեճ ծավալվի երկրի քաղաքական համակարգի դեմոկրատացման համար: Նա նաեւ խոստովանեց, որ հետ նայելով առվածին, իհարկե, կարելի էր ավելին անել, որպեսզի պատերազմ չլիներ: Մյուս կողմից՝ նոր հնարավորություններ են բացվել տարածաշրջանի երկու այլ երկրների՝ Հայաստանի եւ Ադրբեջանի համար լուծելու Ղարաբաղի խնդիրը: Ղարաբաղի խնդրին նվիրված նիստը վարում էր Միջազգային ճգնաժամային խմբի կովկասյան տնօրեն **Լորենս Շիքը**, որը շատերին ծանոթ է նաեւ իբրեւ Ռոյթեր լրատվական գործակալության Կովկասի բյուրոյի նախկին տնօրեն:

Ղարաբաղյան խնդրի քննարկումը նույնպես անցավ հետաքրքրական բացահայտումներով, որոնցից առաջինն արեց չեխ վերլուծաբան **Բլանկա Հանչիլովան**, ասելով, թե ի սկզբանե այս հակամարտությունը ունեցել է կրոնական բնույթ: Զարմանալին այն է, որ Կովկասի խնդիրներով զբաղվող եվրոպացի քաղաքագետները 20 տարի անց էլ մնում են նույն կաղապարված գնահատականների գերին: Դեռ լավ է, համաժողովի այդ նիստի մասնակից, Գլոբալիզացիայի եւ շրջանային համագործակցության վերլուծական կենտրոնի տնօրեն, քաղաքագետ **Ստեփան Գրիգորյանն** իր ելույթը սկսեց մինչ այդ հնչած սխալ գնահատականների ուղղումով, ասելով նաեւ, որ ղարաբաղյան խնդրի մեջ երբեք կրոնական տարը որոշիչ չի եղել, ընդամենը 1-3 տոկոս է եղել, եւ որ դա հիմնականում քաղաքական հակամարտություն է: Ի դեմ, մեր հայրենակիցն իր ելույթում կարետրեց մոսկովյան հռչակագիրը, ասելով, որ լուրջ փաստաթուղթ է եւ առաջին անգամ նախագահների մակարդակով ստորագրված փաստաթուղթը ցույց է տալիս, որ Հայաստանի եւ Ադրբեջանի շահերը համընկել են: Անգլիացի կովկասագետ **Թոմաս դը Վոլի** կարծիքով էլ, Ռուսաստանը շատ է շահագրգռված ղարաբաղյան հակամարտության արագ լուծումով, լրիվ մեկուսացման ենթարկելով Վրաստանին: Սակայն այս խնդրում գլխավորը մարկետինգն է, քանի որ միջազգային հանրությունը հասկանում է, որ պետք է լուծել խնդիրը, բայց դրա համար անհրաժեշտ ռեսուրսներ չկան: Պետք է լուծվի կոնսենսուսի հարցը եւ ճիշտ մարկետինգ արվի: Եվ այդ նպատակով, ըստ նրա, Ղարաբաղի հարցը պետք է առաջին տեղում լինի տարածաշրջանային խնդիրների օրակարգում:

Ադրբեջանցի քաղաքագետ **Արիֆ Յունուսովի** կարծիքով՝ ադրբեջանական հասարակության բոլոր թեւերը շատ բացասական վերաբերմունք ունեն Մոսկովյան հռչակագրին, քանի որ հասարակական կարծիքի պատրաստմանը խոչընդոտել է հենց երկրի իշխանությունը: Սովետական տարիներից ի վեր Ադրբեջանի քաղաքական համակարգում գրեթե ոչինչ չի փոխվել: Հենց դա է, քաղաքագետի կարծիքով, Ադրբեջանի դժբախտությունը՝ «Ավտորիտար էլեմենտներով եւ դեմոկրատական դիզայնով» պետություն: Նրա ասելով, այսօր Ադրբեջանում շարունակվում է երկրի իսլամիզացիան եւ ոչինչ չի արվում Ղարաբաղի խնդրի լուծման շուրջ հասարակական կարծիքի նախապատրաստման համար: Ուստի բանախոսը ԵՄ ներկայացուցչին հարց ուղղեց՝ թե ինչո՞ւ չեն պատժամիջոցներ կիրառում Ադրբեջանի նկատմամբ եւ խնդրեց օգնել Ադրբեջանի դեմոկրատացմանը: Վերջինիս Պիտեր Սեմնեբին պատասխանեց, որ պատժամիջոցները ոչ մի լավ արդյունքի չեն հանգեցնի, ավելին, կկորցնեն փոփոխությունները անելու հնարավորությունը:

«Եթե Ղարաբաղը որեւէ կողմին տրվի, դա կդառնա անկայունության օջախ, քանի որ Ղարաբաղը հոգեհարազատ է թե՛ հայերին եւ թե՛ ադրբեջանցիներին», ասաց Յունուսովը:

Ղարաբաղյան հակամարտության լուծման արագացման դեմ խոսեցին Ստեփան Գրիգորյանն ու լեհ վերլուծաբան **Վոյցեխ Գորեցկին**, նշելով, որ ամենավտանգավորը կոնֆլիկտի լուծման արագացումն է: «Կոնկորդ» քաղաքական հետազոտությունների կենտրոնի տնօրեն **Դավիթ Շահնազարյանն** էլ առաջարկեց իր մոտեցումը՝ պետք է շտապել դանդաղ: Նա նշեց, որ 1997 թվականին կորցրեցին իրական կարգավորման հնարավորությունը, մտավախություն կա, որ հիմա էլ կկորցնեն: Հետեւաբար, կարետրելով այս պահը, հայաստանյան արմատական ընդդիմությունը նույնիսկ ժամանակավորապես դադարեցրել է զանգվածային հավաքները, որպեսզի չվնասեն բանակցությունների ընթացքին: Շահնազարյանը վերջում ավելացրեց, որ իրենք խելամիտ փոխզիջման կողմնակիցն են:

Համաժողովում այլ գնահատականներ էլ հնչեցին, մասնավորապես տիկին Բլանկան Ղարաբաղի խնդիրը շատ նմանեցրեց Կիպրոսի խնդրին եւ ասաց, որ Ղարաբաղը ոչ մի որոշում չի ընդունի, եթե դրան չի մասնակցել: Իսկ Ստեփան Գրիգորյանն էլ ներկաներին հորդորեց, որ եկել է ժամանակը, որպեսզի բոլորս սովորենք հաշվի նստել նաեւ փոխզիջման կարծիքի հետ:

Ի դեմ, Ադրբեջանի, Հայաստանի, Վրաստանի պատմության դասագրքերի ուսումնասիրությունները, որ իրականացրել էր չեխական Միջազգային հարցերի ընկերակցությունը, գրքույկի տեսքով ներկայացվեց համաժողովի մասնակիցներին: Այդ ծրագրի հայկական կողմի ներկայացուցիչ Միխայել Զոլյանի հետ մեր զրույցը, ինչպես նաեւ հարցազրույցները Պիտեր Սեմնեբիի, Ստեփան Գրիգորյանի, եւ «Եվրասիա» հիմնադրամի Երեւանի գրասենյակի տնօրեն Գեւորգ Տեր-Գաբրիելյանի հետ կարդացեք «Օրեր» եվրոպական ամսագրում:

ՀԱՍՈՆ ԱՍԱՏՐՅԱՆ
Պրահա

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

32-ԱՄՅԱ ՀԱՇՄԱՆԴԱՄԸ ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԻ



32 տարեկան Հարություն Թովմասյանը ղարաբաղյան պատերազմի մասնակից է, եղել է Զանգելանի, Հորադիզի ազատամարտերի անմիջական մասնակիցը: Հոդացավերի ոչ լիարժեք բուժման պատճառով երկու անչափահաս երեխաների հայրն առաջին կարգի հաշմանդամ է դարձել՝ գամվելով շարժասայլակին: Հարություն Թովմասյանը շտապ վիրահատության կարիք ունի, որի համար պահանջվում է 6 հազար ԱՄՆ դոլար գումար: Պատերազմի մասնակիցը բարեգութ մարդկանց աջակցությունն է հայցում:

Հեռ. +37493030014, +37410489224

Արժութային հաշիվը (Հայաստանից)
Տարադրամի տեսակը. AMD
Բանկային տվյալներ. ՎՏԲ բանկ 35 բաժանմունք Շենգավիթ, Երեւան
հ. 160690003316, Թովմասյան Հարություն
Արժութային հաշիվը (Ռուսաստանից)
Տարադրամի տեսակը՝ USD
:56 INTERMEDIARY: THE SAVINGS BANK of the RUSSIAN FEDERATION, MOSCOW
SWIFT CODE SABRRUMM
:57 BENEFICIARY's BANK: 30111840600000000065
'VTB BANK (ARMENIA)' CJSC, YEREVAN,ARMENIA,
SWIFT: ARMJAM22
BRANCH: SHENGAVIT BRANCH
:59 BENEFICIARY: TOVMASYAN HARUTYUN
Account N 160690007465
Արժութային հաշիվը (բոլոր երկրներից բացի Ռուսաստանից)
Տարադրամի տեսակը՝ USD
: 56 INTERMEDIARY: AMERICAN EXPRESS BANK LTD, NEW YORK
SWIFT CODE: AEIBUS33
New York Agency, P. O. Box 740, New York, NY 10008
: 57 BENEFICIARY's BANK: 740357
'VTB BANK (ARMENIA)' CJSC, YEREVAN,ARMENIA,
SWIFT:ARMJAM22
BRANCH 35
:59 BENEFICIARY: TOVMASYAN HARUTYUN
Account N 160690007465

ԹԵՔԵՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ
«ԹԵՔԵՅԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲ»-Ը

Նոյեմբերի 29
Դեկտեմբերի 1

ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Է

Պերճ Զեյթունցյանի

«ՄԻ ՆԱՅԻՐ ՀԱՅԵԼՈՒՆ»

բեմադրությունը

Նվիրվում է 2000-2007 թթ.
ՀՀ վարչապետ **ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ** հիշատակին

Գլխավոր դերում՝ **ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Դերերում՝
ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ, ԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ, ՄԽԻԹԱՐ ՄԵԼՔՈՆՅԱՆ, ՍՈՆԱ ՎԵՐԴՅԱՆ, ՍՄԲԱՏ ՍՏԵՓԱՆՅԱՆ, ԱՐՏՅՈՒՇԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ, ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ, ՍԱՄՎԵԼ ՕՀԱՆՅԱՆ, ԻՇԽԱՆ ՂԱՐԻԲՅԱՆ, ԷԴՎԱՐԴ ԳԱՍՊԱՐՅԱՆ, ՀԱՍՄԻԿ ԱՍԼԱՆՅԱՆ, ՓԱՅԼԱԿ ՑՈԲԱՆՅԱՆ

Բեմադրությունը՝
Արվեստի վաստակավոր գործիչ, պետական մրցանակի դափնեկիր
ԱՐՏԱՇԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

Ներկայացումները տեղի կունենան
Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնի շենքում
Սկիզբը՝ ժամը 19.00

Տոմսերի համար զանգահարել Թեքեյան մշակութային միություն՝
հեռ.՝ 57-02-83, 55-26-32

«ՖԼՈՐԵՍ» աճուրդի տուն ՍՊԸ-ն «Ադամանդ» ԵԱՀ բորսայի հարթակում իրականացնում է «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի ներկայացրած գույքի աճուրդային վաճառքը՝

1. Բնակարան, ընդհ. մակերեսը 81,05 մ2:
Հասցե՝ ՀՀ, ք. Գյումրի,
Կամոյի փող., շենք 48ա, բն. 4:
Մեկնարկային գինը՝ 7.000.000 դրամ:
2. Բնակարան, ընդհ. մակերեսը 94,39 մ2:
Հասցե՝ ՀՀ, ք. Գյումրի, Մ. Ավետիսյան փող., շենք 9, բն. 42:
Մեկնարկային գինը՝ 6.300.000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական եւ հոլանդական եղանակներով 29.12.2008 թ.-ից մինչեւ 30.03.2009 թ., յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 13.00, ք. Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում:

Տեղեկությունների համար դիմել՝ հեռ. 56-52-28:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Դեկտեմբերի 1-ին, ժամը 14.00-ին Լոռու մարզի «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ում տեղի կունենա «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Ախթալա խաղաքաղաքի վարչական տարածքի պայթուցիկ նյութերի պահեստի ձորում գտնվող եւ վերականգնվող ոչխամբարի նախագծի վերաբերյալ հասարակական լսումներ:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝ Լոռու մարզ, «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ կամ Երեւան, Կոմիտասի 29, հեռ. (010) 22-14-85, (010) 22-15-68:

ՀՈՎԱՑՈՒ ՀԱՄԱՐ ՅԱՆԵՑԱՇԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեությունն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝26.11.2008, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունեաց 2: